

ԳԵՂԱՐՒԵՍՏԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ-ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԹԱՓԱՐԱՁԿ

№ 2 կիրակի 13 յունուարի երկրորդ տարի 1891

ՋՀԱՆԳԻՐ-ԽԱՆ ԷՆԻԿՕԼՕՊ-ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Արտասահմանից Թէհրան վերադառնալով այս շաբաթ մեզ հիւր էր Պարսից զօրանոցների գլխաւոր կառավարիչ, գեղարուեստների նախարար Ջհանգիր-խան Էնիկօլօպ-Մամիկոնեանը, որ շատուիղն է Մամիկոնեան սերնդի:

Ջհանգիր-խանի պապերը Հայաստանից վրաստան տեղափոխուելով վրաց թագաւորներին մեծամեծ ծառայութիւններ են մատուցանում եւ վրաստանում վարում են նշանաւոր պաշտօններ: Նրանցից մէկը իր իմաստութեան եւ պերճախօս լինելուն համար վրաց թագաւորից ստանում է Էնիսկօլօպի տիտղոսը, որ նշանակում է խելքի շտեմարան:

Ջհանգիր խանի պապ Ռուստամ-խանը գնի է տարուում պարսկաստան, որ վերջը ազատուելով չէ վերադառնում վրաստան, այլ մնալով այնտեղ մտնում է պարսից զինուորական ծառայութեան մէջ: Շուտով նա ընտանում է զօրապետի պաշտօն եւ սկսում է առաջին անգամ կանոնաւորել պարսից զօրքը: Մշտադրութիւնը իրագործելու համար իր Սուլէյման տղին մի քանի ազնուական երիտասարդների հետ ուղարկում է Ռուսաստան զինուրական կարգ-կանոն ուսումնասիրելու համար: Երիտասարդ Սուլէյման-խանը իր ընկերների հետ Ռուսաստան են հասնում 1812 թ. երբ ռուսները մեծ պատերազմ ունէին Նապալէօնի դէմ: Առանց երկար ու բարակ մտածելու երիտասարդ Սուլէյմանը մտնում է ռուսաց զօրքի մէջ եւ մեքանի քաջութիւններ անելով ստանում է Կապիտանի աստիճան եւ վերադառնում Պարսկաստան ու ամուսին ծառայելով մեծ պաշտօններ է վարում եւ վերջը Արաքիայում ստանձնում է կուսակալի պաշտօն:

Ջհանգիր-խան Էնիկօլօպ-Մամիկոնեան

Ջհանգիր-խանը ծնուել է Թաւրիզում 1828 թ. ապրիլի 1-ին, նրա մայրը Ազուլեցի է, իր սկզբնական ուսումը ստանում է Թաւրիզում Ղազար վարդապետի մօտ եւ ապա գնում Սպահան տօրը Սուլէյման-խանի մօտ ու մնում զինուրական ծառայութիւն: Սա իր խելքի եւ քաջութեան համար շատ մեծ բարձրով ստաչ է զբաղում ծառայութեան մէջ եւ վարում է նշանաւոր պաշտօններ: Սիրելին է Շահին, իսկ ինքը սիրահար արհեստների. Թէհրանում նրա պալատի շուրջը արհեստանոցներ են կառուցած, ուր օրւայ մեծ մասը եւ Ջհանգիր-խանը անց է կացնում: Նա եւրոպայից հրաւիրել է արհեստների զանազան ճիւղերի մասնագէտ վարպետներ եւ ամեն օրիկ է ծափում Պարսկաստանում արհեստները ծաղկեցնելու: Ջհանգիր-խանը եւրոպայի համարեա բոլոր պետութիւններից՝ Ռուսաստանի, Անգլիայի, Փրանսիայի Գերմանիայի. Աւստրիայի, Յունաստանի, Իտալիայի, եւայլն ունի առաջնակարգ շքանշաններ, բայց ինքնուրոյն թեամբ ցուցամոլ չըլինելով նա բացառիկ դէպքերում է զարդարում իր ազնիւ կուրծքը դրանցով եւ համարեա միշտ հագնում է աւելի քան հասարակ:

Ջհանգիր-խանի կրտսեր եղբայրը՝ Նարիման-խանը Պարսից դեսպանն է Վիէննայում եւ Պօլսոյ յայտնի Գօրու-Բէյ Դաղեանի փեսայ:

Սա նոյնպէս սիրահար է գեղարուեստի եւ Վիէննայում նրա դահլիճները զարդարած են առաջնակարգ նկարիչների պատկերներով: Ինքնուրոյնութեամբ Նարիման-խանն էլ եղբօր պէս ցուցամոլ չէ. նրա պարապմանն սենեակը նմանում է աւելի մի գիտնականի աշխատարանի, քան թէ մի դեսպանի գրասենեակի:

Սատիկ պարապելուց Ջհանգիր-խանը աչքերի բորբոքումն էր ստացել եւ անցեալ ամառը գնացել էր արտասահման բժշկուելու: Այժմ թէեւ ոչ բոլորովին բժշկուած, սակայն մի քանի անդրաժեշտ գործերի պատճառով Շահը նրան պահանջել էր եւ նա բժշկուելը կիսատ թողնելով վերադարձել է Թէհրան:

Ջհանգիր-խանը այն հայ պաշտօնեաներից մէկն է, որոնց ներկայ վեհափառ շահը վերաբերւում է լիակատար վստահութեամբ, նրանց ուղարկելով իբրեւ իր պետութեան ներկայացուցիչներ եւրոպական զանազան մայրաքաղաքները: Ջհանգիր խանը մի առանձին սէր է վայելում պարսիկ ժողովրդից իբրեւ արհեստասէր մարդ, որովհետեւ արեւելքում արհեստն ամենասուրբ գործն է աշխարհիս երեսին եւ արհեստաւորի աշխատանքը „հալալ է“: Այս կարծիքը եւ կառավարութեան համակրանքը Ջհանգիր-խանին հասցրին այդ մեծ պաշտօնին:

ՎԵՐՋԻՆ ՎԷՐՔԵՐ

Բ.

ՋՐՇԵՐԻ ԲՆԴԸ

Թաբէթաբը միչա նեղւած է Մուսալի սարերի մէջ։ Իր արծաթավայլ մէջքը հարիւր ու մի տեղից կոարատելով, հարիւր ու մի անգամ որոկելով, կծկելով, նա եւանդով քերում է, լանում, յղկում, սպիտակացնում է վիթխարի ժայռերի կոպիտ ու սարսափելի պինդ ոտները։ Նէ նրա անվերջ ու անսկիզբ վշտոցները, խուլ արտունջները յաւիտեան աղմկել են այն նեղ ու քարքարոտ ձորը, որ Մուսալը բաց է թողել չարքաշ ջրերի համար։ Ահաւոր հսկաները, այդ վայրենի ժայռերը, բոլորովին արհամարում են Ղարաբաղի այդ ամենամեծ գետը, ամեն մի քայլում հրէշային որոդայթներ են լարում նրա առաջ։ Մի տեղ անդրին ժայռը մի ահագին ուժեղ ոտ է տարածել դէպի առաջ, գետի ասկով և հարկադրում է նրան աստիճ կսկիծից խորովողի նման կծկուել, գալարուել, տաքանալ, փրփրել և այնպէս թափել այդ ոտի վրայով։ Մի ուրիշ տեղ մի այլ այդպիսի ժայռ յանկարծ կազմում է մի սուր անկիւն և գետը այդտեղ մի նեղ անցքի ապաւինած՝ կողքի վրայ կտրւում է, մնում մի անձուկ կիրճ, ուր նրան երկու կողմից հուզ են տալիս ժայռերը, աւելի և աւելի բարձր են դուռացնում նրան։ Այդպիսի տաժանական ճանապարհի վրայ նա ինքն իր համար ցաւեր է ստեղծում. պոկում է ժայռերից ահագին բեկորներ, մոլեգնաբար առաջ է տանում, դէս ու դէն է զարկում, կամ փչրում, մանրացնում է և անխնայ հարւածում այդ փշրանքները իր ալիքներով, կամ թէ կոխում է ձորի մի նեղ տեղը, աւելի ևս նեղացնում իր ճանապարհը և կատաղած ուռչում է, մեծանում, բարձրանում, և թափւում նրա վրայից։

Մի տեղ Թաբէթաբի հետ խառնւում է Թրղին, Մբուսալի կուսական անտառների պարդևը—մի քաղցրահամ, կայտառ գետակ, որ փրփրած, աղաղակելով գալիս է հիւսիսից։ Թրղու արևելեան ափին ձգւում է ժայռերի մի միապաղաղ բարձրութիւն, որ առաջ գալով, մի ահագին ժայռոտ կազմածք է դնում Թաբէթաբի ձորը։ Գետը այստեղ էլ մի աւելորդ չրջան է տալիս, ոլորւում է այդ ժայռերի ոտների մօտով և թեքւում է դէպի հիւսիս։ Այդ ժայռերից աւելի վայրենի, աւելի անմատչելի բան բնութիւնը չատ քիչ ունի չինած Մուսալի լեռնային աշխարհում։ Երկու կողմից, արևմուտքից և արևելքից, այդ հրէշ ժայռը կազմում է վիթխարի բնական պատեր, որոնք կախ են բնկած Թրղու և Թաբէթաբի վրայ. իսկ երբորդ, հարաւային կողմը մի դժւար և թեք վառխվայրով իջնում է դէպի Թաբէթաբը։ Բնութիւնն ամրութիւնը մարդիկ բաւական չեն համարել, այլ աւելի ևս ամրացնելով, չինել են իրանց համար բերդ։ Ժայռի վրայ, հարաւային դառիվայր կողմից, կտած է քար ու կրի ամուր պատը, որ դեպից քիչ բարձր չրջավակում է ամրութիւնը և միանգամայն անմատչելի գարձնում։ Իսկ այնտեղ, ժայռի բարձր դնացած գագաթին բուն բերդն է։

Միայն ժայռերը չեն ամրացնում այդ բերդը, միայն խոր ձորերը չեն, որ կտրում են նրա չորս կողմը անմիթնելի խրամատների պէս։ Երեք կողմից նրան չրջապատում են անհանգիստ, արնախում ջրեր—մի կողմից Թրղին և երկու կողմից Թաբէթաբը։ Ջրերի այդ բերդիցն է ամբողջ գաւառը Ջրաբերդ կոչւում։

Ամենից ապահով, ամենից զօրեղ բերդը։ Խաղաղ ժամանակները նա անբնակ էր մնում. իսկ երբ գալիս էր խառն ժամանակը, երբ մարդիկ սրից ու արիւնից թագուստ էին որոնում լեղապատառ, ջրերի բերդը ընդունում էր իր գլխի վրայ կարօտողներին և պահպանում էր նրանց այնպիսի դիմացկունութեամբ, որպիսին կարող է ունենալ ոտքից մինչև գլուխ քարային բերդը։ Այդպէս էր և այս անգամ։ Նրա մէջ էին հաւաքւած ջրաբերդցի հայերի ընտանիքները, գլխաւորապէս կանայք և երեխաներ։ Տղամարդիկ քաշւել էին չրջակայ սարերի գլուխը, ուր պահում էին իրանց տաւարն ու անասունները։

Բերդի պաշտպանները այս անգամ չատ էին, որովհետև այս անգամ այնտեղ պատսպարւած էր նաև Մելիք-Մեժլումի ընտանիքը։ Գաղթականութիւնը այդ ընտանիքը տեղից չարժել չըուեց. նա տեղահանութիւն չունէր մելիքից, չըդիտեր թէ արդեօք հարկաւոր է գաղթել և որ պէտք է դնալ։ Մելիքի մայրը, տիկին Ղամար-Սօլթանը, այն հազւագիւտ կանանցից մէկն էր, որոնց խօսքը տեղ է հասնում, որոնք ունին հեղինակութիւն, որոնցից ամաչում են, վախենում են։ Նա հակառակ էր գաղթականութեան. նա աշխատում էր, որ մարդիկ հանդարտ նստեն իրանց տեղը, վերջին ապաստեն։ Բայց այս անգամ տիկնոջ խօսքը, խրատը չատ չատերը դետին գցեցին, ոտնակոխ արին։ Կարծես նա՝ այլ ևս առաջւայ Ղամար-Սօլթանը չէր, Մելիք-Հաթամի կինը, որի հետ խօսքի էին նստում երկրի բոլոր խելօք մարդիկը, նոյն իսկ Գանձասարի կաթողիկոսները։ Տեսնելով մարդկանց յամառութիւնը, տիկինը նստեց իր տանը, հաւատալով իր բարեկամներին, որ ժամանակը փոխւել է, աշխարհը կործանւելու վրայ է։ Թափուր մնացած երկրում ապահովութիւնը չատ քիչ էր. ամեն մի թուրք աւազակախմբի ձեռ նպատակին Մելիքի ընտանիքն էր. նրան էին ուզում ձեռք ձգել և այդպիսով կտրատել Մելիք-Մեժլումի թեները։ Բայց Ղամար-Սօլթանը ժամանակ չըուեց դիչատիչներին այդ միտքը իրագործելու. նա հաւաքեց ընտանիքը և ամրացաւ Ջրաբերդում։

Այս պատճառով բերդը պաշտպանւում էր խստութեամբ և մեծ զգուշութեամբ։ Բերդի միակ մուտքը, որ Թրղու ձորի կողմով բարակ թելի պէս ոլորող կածանի վրայ բացած դըռներն էին, պահպանում էին տասի չափ զինւած մարդիկ։ Բաւական չէին ծանր, երկաթապատ անագին դռնները, նրանց հետը բարձրացած էր, չոր քարերից կազմած մի պատ։ Բայց դիչերները պարսպի տակ կանգնում էին պահապանները, որոնք հերթով քնում էին, հերթով զարթնում և ազմկալից Թաբէթաբի ափերն էին դիտում։ Բերդի մէջ ամենքը հնազանդւում էին Ղամար-Սօլթանի հրամաններին. նա էր գլխաւորը, կարգադրողը, իսկ նրանից յետոյ մեծն էր մի դիւղացի հայ, որին անւանում էին Աւրաքօլի *։

Թուրքերի, քօլոնիների և այլ թափառական ցեղերի մի խառնիճաղանճ բազմութիւն պաչարած պահում էր բերդը, ցրւած Թրղու և Թաբէթաբի ձորերում. թէև պարբերաբար նրանցից բաժանւում էին խմբեր, որոնք ասպատակութիւն էին անում երկրի զանազան կողմերում, բայց համեղ պատառը միայն մէկն էր և այդ պատառը Ջրաբերդի մէջ պաչարւած բնտանիքն էր, ուստի նրանք դարձեալ չետ էին դառնում, դարձեալ նստում բերդի

* Այս մարդուս իսկական անունը յայտնի չէ. ժողովրդի աւանդութիւնների մէջ պահպանւել է այդ անչայտ հետքի մանրանունը միայն։

մօտ։ Ցերեկները պաշարողները չէին համարձակւում բերդին մօտենալ. պաշարուածները քարերով էին հալածում նրանց, քարերով, որոնք ահագին բարձրութեան դիմից գլորւելով, անխուսափելի մահ էին տանում իրանց հետ։ Պաշարողական դրութիւնը չարունակւում էր միանման կերպով։ Բերդի մարդիկը սովորած այդ դրութեան, հանդիստ իրանց ընտանեկան գործերն էին կատարում. իսկ պաշարողները, բռնելով չորս կողմի բոլոր ճանապարհները, յոյս ունէին որ չուտով կը վերջանայ բերդի պաշարը, ուստիզեղէնը և սովը կը հարկադրէ պաշարուածներին դուրս գալ, յողութիւն խնդրել և հլատակւիլ։

Գ.

ԱՄԵՆ ՄԷԿՆ ՄԻ ԲԱԺԻՆ

Պաշարած Զրաբերդի դիմաց, Թարթարի միւս ափին բնակած սարի ստւերը, երեում էր մի առանձնակի չինուածիւն, որ չրջապատւած էր մի քանի հատ ծառերով։ Նրա առջևով բնակած էր մեծ ճանապարհը և այդ ճանապարհից երկար ու լայն բակը մտնելու համար տունը չրջապատող բարձր պարսպի մէջ բացւած էին մեծ դռներ, որոնք միայն դիչերներն էին փակւում։ Այդ տունը իշխանի էր՝ մեծ ճանապարհի վրայ չինած։ Վտանդը, երկիւղը անպակաս էր այդ տեղերից. բոլոր ուղեվարները այդ ճանապարհի վրայ էին որս որոնում և անխնայ կողոպտում էին մեծ ու փոքր կարաւանները, սպանում էին մնացուղ ճանապարհորդներին։ Այդ մեծ ճանապարհը երևանի կողմից էր սկսւում և Թարթարի ափով գուգընթացաբար անցնում էր Զրաբերդի միջով, դուրս էր գալիս Ջուանչիի դաշտերը և ուղղւում էր դէպի Գանձակի երկիրը։ Ուղեվարների ահը հարկադրել էր երևանի և Գանձակի խաներին աւելացնել ճանապարհի վրայ չինած իշխանների թիւը, որպէս զի ճանապարհորդները չուտ օդնութիւն ստանան և պատսպարւեն այդ չինութիւնների մէջ։

Դիչեր էր, այն մութ դիչերներից մէկը, որ լեռնային աչունը բերում է իր մառախուղների, անչափ խոնաւութեան հետ։ Ցուրտը չատ զգալի էր, այդ պատճառով իշխանի կեղտոտ ու ցածրիկ սենեակում վառած կրակը իր վրայ էր հաւաքել այդտեղ գտնւող բոլոր մարդկանց։

Կրակի մօտ, մի փոքրիկ դորգի վրայ, նստած էր մի Թուրք, որ թիկն էր տւել իր ձիու՝ բոլորովին նոր թամբին։ Նա ունէր երկար բեղեր և կարճլիկ, խուզած միրուք, որոնք խինայով ներկած էին. բարձր ու սրածայր սև վարվարը հպարտութեամբ նստած էր նրա գլխի մի կողմին, արձակ թողելով միւս կողմը, որ խնամքով ածիլած էր և պսպղում էր կրակի առաջ։ Թուրքը, ինչպէս երևում էր, հասարակ մարդ չէր. այդ ամենից առաջ հաստատում էին միւս մարդիկ, որոնք խորին յարգանքով և ակնածութեամբ էին պահում իրանց նրա մօտ։ Նէ բացի դրանից, նրա չաղ դէմքը, կոլոր ու մեծ աչքերը, որոնք մի աչխոյժ և խոր ազդող ջերմութիւն ունէին իրանց մէջ, նրա չարժողութիւնները ցոյց էին տալիս, որ այդ մարդը ոչ միայն չատ ժամանակ է ապրել պատւի ու լուսթեան մէջ, այլև ունի հրամայելու, կառավարելու իրաւունք և կարողութիւն։ Նրանից քիչ հեռու նստած էին մինչև տասներկու հոգի, որոնց մէջ միայն երեքն էին Թուրք, մնացածները կրում էին Ղարաբաղի հայ դիւղացու հագուստը, որ մի չնչին բանով էր զանազանւում Թուրքերի հագուստից. իսկ մեկը դրանց մէջ մինչև անգամ ունէր Թուրքի ձևով խուզած կարճլիկ միրուք. այդ մարդը ամենքից ունևորն էր երևում, ամենքից լաւ հագուստ ունէր վրան։

Թուրքը Իբրահիմ-խանի դիւանբաշին էր, դիւանապետը, որ կոչւում էր Հաջի-բէկ և որ խանի՝ Զրաբերդ ուղարկած Թուրք պինւորների գլուխն էր։ Խանը այդ պաշտօնը ժամանակաւորապէս յանձնել էր իր դիւանապետին, իմանալով նրա անսպառ կարողութիւնը ամեն մի բան կարգին դնելու, ամեն մի դաչնակցութիւն, առևտուր գլուխ բերելու մէջ։ Դիւանապետը հոգևորական կոչումից էր, մի պարսկաստանցի մօլլայի որդին էր. սաստիկ ատում էր բոլոր գեաուրներին. բայց դիւանագիտութիւնը հարկադրում էր նրան դօռով քար դնել կրծքին և արտաքուստ քաղցր ու համբերող երևալ. իսկ այդպիսի դէպքերում, այսինքն երկդիմի, մի քանի տեսակ մարդ դառնալու մէջ, նա չատ հարպիկ էր։ Հայերը Զրաբերդի Դիւանապետ դիւղիցն էին։

Խօսում էր Հաջի-բէկը։

—Օգուտը չատ է, անչափ։ Դուք չը գիտէք . . . Ղուբանը, սուրբ Ցիսուսը վկայ, չէք հասկանում։ Եթէ այդ գործը լինի, սրծնի յաղողութեամբ, Զրաբերդի միլիքութիւնը Ռուստամ-բէկի ազգինն է որդուց որդի։ Մենք կըտանք ձեզ, ինչ որ հարկաւոր է. զօրք էք ուզում, կըգան մեր պինւորները, օդնութիւն էք ուզում, մենք ձեր եռևը կանգնած ենք։ Ասւած վկայ, այնուհետև Իրանն էլ ձեզ չի կարող մի մատով խփել։ Խեչը, հայեր, խելք սովորեցէք։ Երբ մի դիժ միլիք կարողանում է կառավարել մի այսպիսի երկիր, դուք հօ աւելի լաւ, աւելի խելօք մարդիկ էք, ձեզ ինչ կայ, հը՞. . .

Այդ հարցին ոչ ոք չըպատասխանեց. բոլորը ականջ կախած լսում էին անչարժ։ Բէկը առաջ տարաւ իր խօսքը.

—Ես ասում եմ, որ յաղող առիթը ձեռքից չըտաք։ Այսօր Շուշուց եկել է մեր գլխաւոր մօլլան, Սէյիդ-Շուքուրը։ Հարցրէք նրանից թէ ինչ լուր է բերել։ Խանը նրան կանչել է, հաւատացրել, երդւել, որ պիտի բնաջինջ անէ Զրաբերդի և Գիւլստանի տղամարդկանց, իսկ կանանց պէտք է քշէ, Արաքսն անցկացնէ, մէկը մի զանով ծախէ, թէ մինչև երկու չաբաթ ամենքը չըխոնարհւին, գլուխ չիջեցնեն նրա առաջ։ Դուք գիտէք, որ խանը իր ասածը կատարել գիտէ, այդ մասին խօսելն աւելորդ է։ Ես խղճում եմ ձեզ, իմ հաւատը, իմ կրօնը վկայ է։ Այս բանը ես ինքս եմ ուզում գլուխ բերել, և եթէ կարողացայ—ինչ վնաս. դուք կըստանաք մի իշխանութիւն, իսկ մեր գլուխը հանգիստ կըմնայ։ Ի՞նչ էք ասում։

Նոյն լռութիւնը չարունակւեց այդ խօսքերից յետոյ։ Հարցը, կարծես, հայերի մտքին ու հասկացողութեանը չէր հասնում։ Ամենքը իրանց բութ ու անզգայ դէմքերը ուղղել էին դէպի չոր դետինը, որի վրայ նստած էին։

—Մելիքից ենք վախենում, ասաց վերջապէս մէկը, այն մարդը, որ ունէր Թուրքի կարճլիկ, խուզած միրուք և ձեռքը դնելով կրծքին, յօնքերի տակից նայեց Հաջի-բէկին։

—Ճչմարիտ է, ճչմարիտ է . . . վախենում ենք, միմեանց ետևից կրկնեցին միւսները։

Բէկի հատ և երկայն բեղերը յետ դնացին մի արհամարհական ժպտից, ոլ երևաց նրա կարմրագոյն շրթունքների վրայ։

—Վախենում էք, հարցրեց նա.—վախենում էք մի վախտակնից, որ երէկ, միւս օրը հազիւ կարողացել է իր գլուխը մեր դահիճների ձեռքից ազատել։ Ո՞ւր է նա, ձեզանից ո՞րը գիտէ։

—Դիւրջխտան է դնացել, պատասխանեցին։

—Այդ հօ մօտիկ տեղ է. չուտով, չուտով Ալլահի օգնութեամբ նա աչխարհի երեսին նստելու տեղ չըպիտի գտնէ։ Նրա պատմութիւնը վերջացել է. նա այլ ևս այս գաւառը չի տեսնիլ, ինչպէս չի տեսնում իր ականջի քամակը։ Տղամարդ նրան կասեմ, ով կարողանայ պատրաստածը ձեռք առնել, պահել, դուք հփած ճաչն էլ չէք կարողանում ուտել, խեղճեր։

Եւ տեսնելով, որ այդ խեղճերը իրանց լուսթեամբ խոկ որ հաստատում են, թէ հփած ճաչ ուտել չեն կարող, այլ վիզները երկարացրել են, անհամբերող դէմքերը միմեանց են դարձնում, ծանր կերպով ճլմլում են, որ նշան էր թէ խեչերին չատ են զօր անում, Հաջի-բէկը չարունակեց.

—Ձեզ հետ դժւար, անկարելի է գործ բռնելը. չէք հասկանում. Ալին վկայ, դլուխներդ հատ են։ Ահա մէկն էլ ասեմ, հասկացէք։ Ռուստամ-բէկը մելիք է Ջրաբերդի վրայ, որտեղից ուզում է, ինչ ուզում է, կարող է վերցնել։ Երկու դիւղ տալիս եմ Բաբա-բէկին, երկուսը Հաթամին ու Սարգսին, երկուսը Վանուն, մէկը քեզ, մէկը քեզ, մէկն էլ քեզ, հասկանում էք։

Բէկը մատով ցոյց էր տալիս ամէն մէկին, որ ընծայ պիտի տանար։ Մի չարք երկարացրած վզերը անհանդիստ դէս ու դէն չարժւեցան, որպէս թէ տեղները դըրըտում էին. այժմ նրանց աչքերի ճլմլոցը ուրախութիւն էր յայտնում. նչանակում էր որ հասկանում էին։

—Շատ լաւ, ասաց բէկը,—ձեզ լինի այդ դիւղերը, երկիրը կերէք, խմեցէք, ապրեցէք բէկի պէս։ Ամէն մէկիդ բէկութիւն իրաւունք և լաւ խալաթ կըդայ խանի դռնից։ Դուք միայն պինդ կացէք, լաւ կացէք։

—Ուրիշները կուռվ, արիւնով են այդպիսի վարքի տիրանում, որ ես խոստանում եմ տալ ձեզ, չարունակեց Հաջի-բէկը քիչ լռելուց յետոյ։—Դուք չատ վաղուց էիք ուզում, որ այս կողմերի մելիքութիւնը ձեր տոհմին տան. հիմա էլ ինչին էք սպասում։ Նրի երդւում եմ, էլի հաւատացնում եմ ձեզ, որ այդ ցանկութիւնը կըկատարւի, եթէ այս բանը դլուխ բերէք։ Մի մեծ բան չէ, որ դուք էք խոստանում։ Եթէ մելիքի ընտանիքը ձերբակալելը չըյաջողւի էլ, մեծ ցաւ չէ. թող այդ բերդի քարերի վրայ փտին։ Այն ժամանակ դուք ձեր օգուտից կըզրկւէք։ Կամ թէ չըլինի՞ թէ կարծում էք, թէ մարդ չի ճարւիլ այս դաւաւը կառավարելու համար։ Միամիտ մնացէք. ձեզ պէս հայեր չատ կան։ Վարանդայից այնպիսի մելիքացուներ բերել կըտամ, որ զարմացած մնաք։ Այն ժամանակն էլ չասէք թէ ինչու այս հեռաւոր, օտար դիւղացի մարդը մեր գլխի տէրը դառաւ։

—Դէ մենք ինչ ենք ասում, բէկ, որ այդպիսի խօսքեր ես հրամայում, խօսեց խուդած միրու-քաւոր մարդը, որ Ռուստամ-բէկն էր։

—Ուրեմն համաձայն էք։

—Մեզ իրաւունք տուր, մի կէս ժամ դուրսը միմեանց հետ խօսենք։

Բէկը իրաւունք աւեց, բոլոր հայերը դուրս գնացին։ Եւ չուտով դռների մօտ սկսւեց մի խառն աղմուկ. նրանք վիճում էին միմեանց հետ, վիճում էին և համբերող մէկը մէւսին չէր լսում։ Կռպիտ հայհոյանքները խառնւում էին մեղմ կերպով յայտնւած զարմանքի հետ. մէկը պինդ էր երևում, միւսը կակուղ։ Անընդհատ լսւում էին այսպիսի խօսքեր. «տնաքանդ . . . տունդ գլխիդ քանդւի, երեխաներիս հացը խլում ես . . . չան երկիր . . .» ինձ մէկը, երևի համբերութիւնից դուրս եկած՝ դռտաց. «բօ, տղայ, ես քեզանից ինչով եմ պակաս, քեզ երկուսն են տալիս, ինձ մէկը»։—Կէս ժամը մի ժամից էլ աւելացաւ։

Այդ ժամանակ բէկը աւելի մօտեցել էր կրակին, վայտ էր դնում նրա վրայ և հուրը աւելի ևս մեծանում էր։ Երբեմն նայում էր դուռը և լսելով այնտեղի աղմուկը, յետ էր դարձնում գլուխը, թքում էր բարկացած և արտասանում էր. «չան ցեղ . . . կոտրւէք դուք»։

Վերջապէս բոլորը ներս թափւեցան. պակասել էր մէկը, որ չըհամաձայնելով իր ընկերների հետ, խռովել գնացել էր։

—Մէկը համաձայն չէ, ասաց Ռուստամ-բէկը։

Իսկոյն աւաչ եկաւ մի երկայնահասակ զեղեցիկ պատանի, որի վերին շրթունքը դեռ նոր էր սևանում դուրս եկող մազերից։

—Ես համաձայն չեմ, ասաց դեղեցիկ պատանին։

—Բա, դու . . . հարցրեց բէկը քաղցր կերպով ժպտալով նրա դէմքին.—անաչէն, դու ես սրանց մէջ չնորհքով մարդը, դու էլ այդպէս ես անում։

—Իմ հօրեղբայրն ինձ այդպէս չի հրամայել, պատասխանեց պատանին դժւարութեամբ այդ բառերը կապելով միմեանց հետ. նա, ինչպէս երևում էր, ամաչում էր պարզ և համարձակ խօսելուց. իսկ նրա կողքին կանգնած մարդը անդադար մատով խփում էր նրա կողքին հարկադրում էր որ խօսէ. և պատանին մատի այդ հարւածներից հետզհետէ սիրտ էր առնում, բացւում։

—Սիմոն կաթողիկոսը . . . հարցրեց Հաջի-բէկը։

—Նրա մասին, աչքիս լոյս, խօսելն աւելորդ է. Աստւած նրան միչտ կարողութեան մէջ պահէ, մինչ նրան կըմոռանանք։ Դու ինձ հաւատացիր, Ստեփան-բէկ, քո հօրեղբօր կարգացած սուրբ դրքերը վկայ են, որ Աղ-Վանքի * կաթողիկոսը նա է ու նա։

Ստեփանը սակայն պինդ էր կանգնած և այս անդամ նրա ասած «չեմ կարող»-ը ամենքի ականջին հասաւ իբրև մի անփոխելի հաստատութիւն։

—Ջանհիլ տղայ ես, ինքդ այդքան սիրուն, ինչու չես ինձ հաւատում, Ստեփան-բէկ, խօսեց խանի դիւանապետն էլ աւելի քաղցրացնելով իր ծիծաղուտ դէմքը։—Ստեփան-բէկ . . . ինչ լաւ անուն է։ Աչխարհս վրայ բէկութիւնը քեզ պէս ջահել համար է ստեղծած. բայց քեզ ուղարկել են տաւարը պահելու։ Խղճմտանք չունենիս։ Քեզ պէտք է պահեն մետաքսեայ չորերում, քո ուղիը երկու սրբած թրերի պէս ծառայ պէտք է լինին, որ քեզ ամեն օր որս տանեն։ Ջէ, տեսնում եմ որ քո չնորհքին չի սազում երկու դիւղը. երկուսն էլ աւելացրի Խաչենի դաւառից. դէ, դնա, չորս դիւղը քեզ վրայ հաստատեցի։

Ամենքը սկսեցին չնորհաւորել Ստեփանին. նա սառըն, անդրդուելի էր մնում, այդ պատճառով ամենքը խնդրում, աղաչում էին նրան։ Նա, ինչպէս երևում էր, մեծ դեր պիտի կատարէր այն գործում, որի համար այնքան մարդիկ դիւղեր, վարք ու պատիւ էին տանում։

—Միամիտ մնացիր, Ստեփան, մէջ մտաւ Ռուստամ-բէկը. նա մեր ամենից հայրն է, ծառայ եմ սուրը աջին, դու ինձանից ուզիր, ես կանեմ, ես։

Ռուստամ-բէկը այդ հաստատելու համար ձեռքը երկու անդամ կրծքին զարկեց։

* Թուղթերը այդպէս են անւանում Դանձասարի վանքը։

ԱԱՈԱ-ԲԵՐԼԱՐ

տիեզերահռչակ դրամատիրակուհի վերստանձնումից:

--Մեր ամենից խօսքից հաստատը խանի խօսքն է, ասաց Հաջի-բէկը.—խանը խոստացել է, իմացիր որ արած պրծած է. եթէ դու էլ, Ստեփան-բէկ, այս գործի պատճառը դառնաս, հաւատացիր, այստեղից հեռանալուց յետոյ մեր զօրքը ուղղակի Աղ-Վանքի վրայ է գնալու։

Ստեփանի կողքը մատով խչտողը, սակայն, չէր դադարում իր գործը չարունակելուց։ Եւ Ստեփանն այնքան յամառ մնաց, որ Հաջի-բէկը հարկադրուած եղաւ իսկոյն մի ստորագրութիւն տալ իր խոստումնքը կատարելու մասին։ Թուղթը գրուեց Իբրահիմ-խանի անունից, ստորագրեց Հաջի-բէկը իբրև լիազօր հաւատարմատար։ Բոլոր ներկայ եղող հայերը վաւերացրին այդ ստորագրութիւնը իրանց ճկոյթները թանաքի մէջ թաթախելով և թղթին սեղմելով կնիքի տեղ։ Միայն Ռուստամ-բէկն ունէր կնիք, նա էլ թանաք քսեց այդ կնիքին և դրօշմեց թուղթը «Քրիստոսի ծառայ Ռուստամ-բէկ» խօսքերով։

Գործը վերջացաւ։ Ստեփանը, թուղթը ծոցում դնելով, դուրս գնաց։ Շուտով նա մի մարդու հետ մտաւ թանձր անտառը, որի միջով ոլորուղ փոքրիկ կածանը տանում էր դէպի Թարթարի ափը։ Այդ մարդը նոյն մարդն էր, որ մատով խթում էր պատանու կողքին։ Նա էր այդ անփորձ պատանու առաջնորդը, որ տանում էր նրան, սոլորեցնում էր ինչ որ հարկաւոր է։ Այդ մարդը Սիմէօն կաթողիկոսի հաւատարիմ ծառան էր։

Դիւլ-Նաթաղցիք էլ դուրս գնացին և հեռացան իջեւանից, դէպի Մեծ-չէնը ուղևորուեցան։ Իսկ Հաջի-բէկը, մենակ մնալով, իսկոյն ջուր բերել տւեց, սկսեց լւացւել և ասլա, երբ սպասաւորը լաւ սրբեց այն տեղը, ուր հայերն էին նստել, բէկը նամազի նստեց։

Ովքե՞ր էին Դիւլ-Նաթաղցիք։

Դրանք Զրաբերդի մելիքութեան հպատակ գիւղացիներ էին, բայց այդ մելիքութեան թշնամի կուսակցութեանն էին կազմում։ Իբրահիմ-խանը մի խորամանկութեամբ, որ պատիւ էր բերում Պարսկաստանի բարձր չրջանների դատը կրթած մարդուն, ուղում էր հայերի թոյլ կողմը հարստահարելով քանդել նրանց տունը։ Այդ թոյլ կողմը հայի փառամոլութիւնն էր։ «Բաժանեա՛ զի տիրեսցես»։ Այս մի հին, հաստատուն ճշմարտութիւն էր։ Խաչենի մելիքութիւնը կործանուեց այն օրից, երբ այդ երկրում մի աւելորդ հայ մելիքութիւն էլ հաստատեցին թուրքերը. նոր հաստատած մելիքը և հին, երկրի իսկական տէրը, միմեանց միսն էին ուտում. այդպիսով երկիրը բաժան-բաժան էր դառնում և քայքայւում։ Աւերման նոր եղանակը խանը մտցնում էր և Զրաբերդի մէջ։ Դիւլ-Նաթաղ գիւղում կար մի ինչ որ Միսայէլ-բէկ, որ մի ինչ որ պատճառով իրան էր Զրաբերդի մելիքութեան վրայ միակ իրաւունք ունեցողը համարում։ Խանը հովանաւոր էր այդպիսի մի խուվարարին, պաշտպանում էր նրա դատը, պատւում էր նրան։ Մելիք-Մեժլումի դէմ դատադրութիւն սարքելը խանի քաղցը մոքերից մէկն էր. նրա ձեռքին դործիք դառաւ Միսայէլ-բէկը, որ պիտի սպանէր մելիքին։ Բայց Մելիք-Մեժլումը իմացաւ այդ դատադրութիւնը և ինքը սպանեց Միսայէլ-բէկին։ Ռուստամ-բէկը այդ Միսայէլ-բէկի ժառանգն էր և այժմ նա չտապում էր իր ձեռքն առնել անտէր մնացած Զրաբերդը, պատժել Մելիք-Մեժլումին։

Ստեփանը թէև Դիւլ-Նաթաղցի չէր, բայց Մելիք-Մեժլումի բռնելուց յետոյ չատ էր տեսնում Դիւլ-Նաթաղցիների հետ, տեսնում էր ամեն կարելի դէպքում թիւնները գործ դնելով, որ իրան չբռնեն, ինչպէս ցոյց էր տալիս իր հօրեղբայրը, Սիմէօն կաթողիկոսը և յաջողեցնում էր իր առաջնորդը՝ կաթողիկոսի հաւատարիմ ծառան։

Ղ. Ը. Օ

Կըշարունակւի.

ՄՐՑՈՒՄՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԵՏ

ղէպ տիկին Ղազըէն-Ղէվլէրի

(Շարունակութիւն)

Սաօլնաչալնիկ էրնը հակումն չունէր դէպի ըսմանտիկական կեանքը։ Նա ստեղծած էր ասպիլի, ամուսնական կեանքի համար. Նա միայն մտածում էր ընտանեկան երջանիկ կեանքի մասին.

Արլան նոյնպէս իր կողմից այդ ամառ տխուր թափառում էր ծովի ափին և անտառի խորքում, տանջւած սրտով։ Նա էլ իր վիշտն ունէր, և մեծ ու ծանր վիշտ։ Արլան հազիւ տասն և ութ տարեկան էր, բայց երան ընդ միշտ զբաղած էր համարում երջանկութիւնից։ Սէրը, որ նրա կազմիլքով ամենաթաբաձր և ամենագեղեցիկ բաղկի է, այժմ նրան թւում էր երբեմն մի թակարդ և ընկճուածութիւն, ինչպէս մի մեղսական փորձութիւն, որին պէտք է յաղթել Թէ և նոյն իսկ իր ամբողջ կեանքի երջանկութեան գնով։ Նրա զօմանը աւելի կարճ էր քան էրնինը. այդ զօմանը տւեց ընդամենը մի երեկոյ։ Մի քանի ժամւան ընթացքում, նա յանկարծ սթափուեցաւ իր հիացումից և հասկացաւ, որ ինքը սիրում է անարժան մարդուն. դրանից յետոյ Նա վճռեց որ այլ ևս չըպէտք է սիրէ. Նրա սիրտը մեռած էր և Թաղւած։

Մինչև այժմ էրնը Արլայի վրայ Նայում էր ինչպէս մի աղակերտուհու վրայ։

Արլան Նրա աչքի առաջ էր մեծանում և Նա երբէք չէր Նայել դրա վրայ երբև չափահաս օրիորդի. բայց երբ Նա նկատեց Թէ ինչպէս Արլան մտածող Թափառում է ծովի ափին, ամուր սեղմած վիրքրիկ բերանով, երբ Նա դիտեց Նրա մեծ մտգ աչքերի մտորած արտայայտութիւնը, Նրան Թւաց Թէ առաջին անգամն է տեսնում այդ օրիորդին և քիչ ժամանակից յետոյ Նա այնպէս սաստիկ սիրահարւեց Արլայի վրայ, որ կարծես Թէ իր առաջին Նշանածը գոյութիւն անգամ չէր ունեցել։

Արլան ընդունեց Նրա առաջարկութիւնը. բայց այդ Թէ այն պատճառով, որ ընդունում էր և Նրա սէրը. ոչ. Նա համաձայնւեց, համոզած լինելով, որ ինքն այլ ևս երբէք չի սիրիլ և մխիթարւելով այն մտքով, Թէ ինքն տեղծւած է ընտանեկան պարտականութիւնները կատարելու համար։ Իսկ Թէ չարգանքը և բարեկամութիւնը ամուսնութեան համար աւելի հաստատ հիմքեր են, քան րոպէական Թուլացիկ զգացմունքը, որ կարող է ծնեցնել մարդու մէջ դիմացինի մի որ և է արատների յատկութիւնը—այդ բանն ասել էր Նրան իր մայրը. բայց ինքն Արլան միԹէ չզգիտէր այդ առանց իր մօրն էլ։ Թէ չէ, ինչո՞վ բացատրել այն հանգամանքը, որ Արլան դրաւեց հէնց առաջին ասպետով, երբ Նրան հանդիպեց առաջին պատահած պարահանդէսում։

Այսպէս՝ Արլան իր ամուսնական կեանքն սկսեց՝ անտրտունջ հոգով հրաժեշտ տալով երջանկութեանից։ Բայց այս միտքը արդեօք չէր հաստատում այն

տերասեաղ կարծելքը, թէ ամուսնական երջանկութիւնը ամենևին չէ կախւած այն զգացումից, որ կենցաղավարութեան մէջ անհանդուրժ է սէր։

Տիկին Էրն ապակեզարդ սրահում նստած զգեստները էր կարում երեխաների համար։

Իր ամուսնութեան առաջին ամսւանից սկսած մինչև այսօր, տասն տարւան ընթացքում նա սկզում էր թափառել, անտառներում ծաղիկները ժողովել, ամբողջ ժամերով ծովի ափերին նստել ու ականջ դնել ծովի ալիքների մրմունջին։

Մի քանի ժամանակ էր որ եղանակի վատութեան պատճառով Արլան անից դուրս էր գալիս միայն երեկոները, որ մարդու հետ թափառցած զբօսնէ մեծ Ճանապարհի վրայ։ Օրւայ մեծ մասը նա անց էր կացնում մեծ սրահում, իր սերած անկիւնում, որտեղ գտնւում էր նրա գործի սեղանը։ Սրահում նստած էր նոյնպէս Արլայի կըրտսեր քոյր Դուրլին, իսկ երեխայքը սենեակի մէջտեղ խաղում էին։

—Ախոռս, ախոռս, որ դու նրան չըսեասը, ասաց Դուրլին, նա այնպէս մի տեսակ գլուխ ուտւ—երեք անգամ, երբը եաւից բարևեց, մինչևնոյն ժամանակ նա ձեռով շինում էր իր գլխի մազերը, որոնք խոզի մազի պէս ցցւած են . . .

—Լաւ, բայց դու գիտէս որ պրօֆէսօր Կլօկը գրել է հայրիկին, որ նա սարսրին ծագումից է և պէտք է մտնէ կարգին ընտանիքի մէջ, որ կենցաղավարական ձևերը սովորէ։

—Բայց համաձայնւելը որ այդ Ճանճրալի է։ Մեզ ուսուցչ է հարկաւոր, շատ լաւ, այդ հասկանալի է, բայց ասա, խնդրեմ, ինչո՞ւ մի ուեղի լաւ ու կարգին մարդ չըհրաւիրել։

—Բայց դու նրան բոլորովին չես Ճանաչում։ Նրա հետ գոնէ մի անգամ խօսի՛ր ես։

—Այդ էր պակաս։ Մայրիկը նրան ասաց „բարով եկիր“, նա էլ պատասխանեց „բարով“. յետոյ նրան ցոյց տւին իր սենեակը և յանգրւին, որ հայրիկը կըգայ հետևեալ շոգենաւով, ուրիշ ոչինչ։

Արլան քիչ քէֆ չունէր և երբեմն երբեմն նայում էր դէպի ծովը։

—Օտտօն ի՞նչ կըգայ, հետևեալ շոգենաւո՞վ, շարունակեց Դուրլին, որ հետևում էր քրոջ նայւածքին։ Ուրեմն. դուք այսօր հայրիկի մօտ էք Ճաշելու։

—Չեմ կարծում, գիտես որ Օտտօն չէ սիրում Ճաշել իր սովորական ժամից դուրս։

—Է՛, լաւ, քո տեղը ես լինէի ուեղի շուտ կարգադրէի Օտտօյին յետ սովորեցնել իր այդ յիմարութիւնները։ Ամօթ է մինանգամայն որ տղամարդն այդպէս թոյլ լինի։

Արլան մի թեթև կատմրեց։

—Յիմարութիւնները մի խօսիր, Դուրլի, քեզ հազար անգամ ասել են որ նա սառնոքսի բորբոքումն ունի։

Դուրլին ծաղրալի ժպտաց։

—Ինչո՞ւ լինչ կայ, իմ խեղճ Արլա, դու պատասխանը ես նրան ամեն բան ներել նրա հիւանդ սառնոքսի համար, ասաց Դուրլին։ Ահա լինչու համար ես վճռել եմ ամենևին մարդու չգնալ։ Ես երբէք չէի կարող այնպիսի համբերող և առաքինի կին լինել, լինչպէս դու ես։

—Բո ասածդ դու լինքդ չես հասկանում։ Հա, լսաւ, Դուրլի, բարօն Ըրնանել այսօր հայրիկի մօտ է Ճաշին, այդ բանը քեզ չի՞ հետաքրքրում։

—Բարօնի համար կարելի է հետաքրքրական է այդ, չըգիտեմ—բայց ես, ես ամենևին չեմ հետաքրքրւում։ Ես նրան կինութեան չեմ գնալ, հազար անգամ ասել եմ քեզ։

—Ձլմարիտ, այդ լաւ չէ քո կողմից, Նա շատ կարգին և լաւ մարդ է։

—Հօ չէ կարելի գնալ մի մարդու մինիայն այն պատճառով, որ նա լաւ մարդ է, գոռաց Դուրլին։—Բրնալը խիստ սովորական մարդ է, մինչև թիւ է, իսկ ես քեզ մի անգամ չեմ ասել, որ ես մարդու կըգամ միայն այն դէպքում, երբ պատահեմ հանճարի։ Բայց մինչև այսօր դեռ ոչ մի հանճար ինձ հետ չէ նշանւել, ահա իմ դըժբաղդութիւնը։

—Երեխայութիւն է, սիրելի Դուրլի, հաւատացիր, հանճարները առհասարակ լաւ մարդիկ չեն լինում։

—Ի՞նչ վնաս ունի. Նա կարող է լինել բարիացած, անխտահ, խանդոտ, վերջապէս ինչ որ ուզում է Թող լինի, միայն Թէ նա պէտք է լինի հանճար և նրա անունը հռչակւի մեր ամբողջ երկրում . . . Ա՛յ, ահ, շոգենաւը գալի է, je me sauve, գոռաց Դուրլին ընդհատելով իր կէս լուրջ և կէս կատակախառն խօսակցութիւնը և գըլխարկը ձեռին վազեց դուրս լեռան վրայով, Ճանապարհից օգտւելն համբոյրները ուղարկելով քրոջ երեխաներին։

Արլան երեխաներին կանչեց իր մօտ, ուզեց նրանց զգեստները և ձեռներից բռնած ուղևորւեց դէպի շոգենաւը։

—Ջմռանաս, Արլա—բղաւում էր Դուրլին հեռւից, գլխարկը Թոյլ տալով,—ոչինչ լսել անգամ չեմ ուզում, այսօր դուք պէտք է Ճաշէք մեզ մօտ. լսի՛ացիր։

Նադվօրնիչ սովէտնիկի երդը հանդարտ քայլերով ելաւ շոգենաւից, համբուրից կինոջ Ճակատն ու երեխաների շրթունքը, ինչպէս անում էր ամեն օր, նկատեց, Թէ հարկաւոր էր վոքրկի եղնսաբէթի բերնի սևը սրբել շոգենաւի մօտ բերելուց առաջ, Թէ Էմիլի կօշկի կապը բացւած է . . . բայց երբ նադվօրնիչ սովէտնիկի նայւածքը սառահմամբ ընկաւ լեռան վրայ, նրա դժգոհութիւնը շատ աւելացաւ։

—Դու պէտք է Դուրլինն ասէիր, որ նա այդ ձևով չըկանգնէր շոգենաւի դէմ ու դէմ և չաշխատէր իր վրայ ուշադրութիւն դարձնել։ Նաև վրայ արդէն նրա մասին նկատողութիւնները էին անում . . . իմ ականջովս լսեցի։ Է՛հ, Դուրլին բոլորովին նրան պահել չըգիտէ, երևակայում է Թէ հէնց որ գեղեցիկ է, որովհետև նրան գուրգուրում են, ուրեմն կարող է անել, ինչ որ քէֆն ուզէ...

—Նրա ընկերուհի Հեղինէն շոգենաւի վրայ է, նկատեց համեստութեամբ Արլան, նրա հետ է այնպիսի ուրախութիւնները անում։

Այս ասելուց յետոյ Նա նայեց դէպի լեռը և տեսաւ որ Դուրլին կանգնած է լեռան վտանգաւոր Թեք լանջի վրայ ու մէկ ձեռով գրկել է ծառը, իսկ միւս ձեռով Թափ է տալիս յարդեայ գլխարկը, բռնած նրա ժապաւէնները ծայրից։ Ճանկարծ քամու հոսանքը խլեց նրա ձեռից գլխարկն ու գլորեց դէպի նեղքևի հովիտը։ Դուրլին բարձրաձայն աղաղակով սլանալով վազեց իր գլխարկի հետևից։

Նադվօրնիչ սովիտնիկը անհանգստութեամբ նայեց դէպի ծովը և նկատեց որ շոգենաւը դեռ չէ անցել հրուանդանի հետը։

(Կըշարունակւի)

ՄԱՀԱՊԱՐՏԻ ՎԵՐՋԻՆ ԺԱՄԸ.

Մի ժամ, մի ժամ կեանք. շարժւում է սլաքը,
Եւ ճօճանակը ճօճում է հանդարտ.
Մի շրջան եւս, եւ ծանր կեանքը
Դրթռչէ ինձնից, կրպատէ խաւար:
Ինչպէ՞ս սառնասիրտ է ճօճանակը,
Ինչպէ՞ս անտարբեր անշունչ սլաքը . . .

Կեանք, կեանք թունալից,
Քեզնից չեմ զզւել,
Տ՛ուր ինձ քո թոյնից,
Ուզում եմ արբել:

Այս պատերից դուրս ոսկէ ժպիտով
Փայլում է արեւը, օրըն է շնչում,
Իսկ ճօճանակըն այստեղ իր ճօճով
Մահւան վայրկեանք է հաշւում եւ զարկում:
Քառասուն տարի. . .

Ինչ շուտ անցաւ այն քառասուն տարին,
Ինչպէս կուզէի
Երեսուն տարով յետ դառնալ կրկին,
Մանկութեանս օրը լոկ մի օր շնչել
Եւ ապա մեռնել:

Ցիշում եմ, պայծառ էր կեանքս մանկական,
Ժպտում էր օրը, օղը մաքուր էր,
Գլխիս փայլում էր արեւ մշտական,
Եւ իմ մանկական կեանքս անմեղ էր:

Թռչնիկն ինձ հետ էր
Դայլայլում, լռում,
Արեգն ինձ հետ էր
Փայլում, մայր մտնում:

Երակներիս մէջ մաքուր էր արիւնս,
Կուրծքիս տակ խաղաղ էր բաբախում սիրտս:
Բայց Թուան, անցան ոսկէ օրերը,
Ժպտադէմ արեւն այժմ խաւարեց.
Զրկան թռչնիկի դայլայլիկները,
Այն պայծառ օղը շուտով վարակւեց.
Ես թոյն շնչեցի,

Եւ լցաւ իմ սիրտս այն դառն թոյնով.
Ինձ շուտ ձանձրացրեց այն խաղաղ կեանքը,
Նոր կեանք ցանկացի
Ես ազահ կերպով:
Օ՜հ, այդ նոր կեանքը...

Ընկայ նրա մէջ անյագ տենչանքով:
Նոր էր ամեն բան, եւ լողում էի,
Կրքերն ինձ վերցրին ահեղ յորձանքով.
Եւ ես ցնորած տատանւում էի:

Վերջը կատարւեց,
Աչքերս բացի,
Ականջս բացւեց,
Եւ ես նոր տեսի,
Նոր լսեցի ես՝
„Դու յանցաւոր ես“:

Անեղ որոտաց իմ խուլ ականջում,
Եւ ես սոսկացի, ղէս ղէն եմ նայում,

Շուրջս մոայլ էր,
Զրկար օգնութիւն,
Կուլ էի գնացել . . .
Թո՛ղ, յիշողութիւն,
Գլորւեց ամեն բան.
Ինձ երբէք ներում
Զրկայ յաւիտեան.

Ես կեանք եմ ատացել եւ յետ եմ դարձնում:
Բայց, ա՛խ, կուզէի,
Ուզում եմ ապրել,
Ուզում եմ տեսնել,

Ինչպէս արեգը երկրի վրայով
Շրջան է անում,
Ինչպէս է կեանքը իր մեղմ ընթացքով
Շարժւում, առաջ գնում:

Ես կրսիրէի... Ես մարդասպան չեմ.
Լո՛ւռ, յիշողութիւն, կեանք չեմ ուզում ես,
Անվերջ պիտ հնչէ ականջիս, գիտեմ,
Սոսկալի խօսքը՝ „դու մարդասպան ես“:
Վերջացաւ ահեղ բան, վազում է սլաքը,
Ճօճում է սառնասիրտ այն ճօճանակը.

Շուտով կըհասնէ
Թիւն օրհասական,
Շուտով կըխփէ
Վճիռն իմ մահւան:
Ճօճա՛, ճօճանակ,
Սլացի՛ր, սլաք . . .

Օ՜, հասաւ ժամը, սլաքը կանգնեց:
Խաւար, մութ, սարսափ... Օ՜, դուռը բացւեց:

ՆԱՊՈՔ

ՄԱՀԱԳՈՑԾ



Քրիստափոր Թադէոսեան

Հեռագիրը զուժեց մեզ մի վաղահաս մահ: Ամսոյս 8-ին Աղէքսանդրապօլու հիւանդանոցում վախճանուեց 24 տարեկան ծաղիկ հասակում տեղական հայոց դպրոցների ուսուցիչ եւ մեր ընթերցողներին իր քանաստեղծութիւններով ծանօթ Քրիստափոր Թադէոսեանը:

Հանգուցեալը ծնուել է Վերին-Ագուլիսում 1866 թուականի հոկտեմբեր ամսին: Սկզբնական կրթութիւնն ստանում է տեղական հոգեւոր դպրոցում, ուր երկու տարի աշխատելով երջանկայիշատակ Րաֆֆիի իբրեւ դպրոցի ամենայառաջադէմ աշակերտներից մէկը գրաւում է իր ընդունակութիւններով նրա ուշադրութիւնը: Աւարտելով Ագուլիսի դպրոցը նա գալիս է Թիֆլիս եւ մտնում է Ներսիսեան դպրոցի երկրորդ դասատունը: Այստեղ նա սովորում է շարունակ 4 տարի եւ այդ ժամանակից ստանում է մի առանձին սէր դէպի եւրոպական քանաստեղծները եւ մանաւանդ դէպի Շիլլերը: Հասնելով հինգերորդ դասատունը՝ Պետրոս Սիմոնեանի տեսչութեան օրերով՝ նա արտաքսւում է դպրոցից, մեղադրելով Պետրոս Սիմոնեանի դէմ, այն ժամանակ պատրաստուող մի ցոյցում յորդորիչներից մէկը լինելում: 18 տարեկան պատանին, դպրոցից զրկուած՝ գնում է հօր մօտ Նուխայ գաւառի Կախ գիւղը եւ ցանկութիւն է յայտնում շարունակել ուսումը ուրիշ դպրոցում:

Հայրը իր միջոցների սղութեան պատճառաւ՝ անկարող է գտնում քաւականութիւն տալու որդուն: Դժուար է երեւակայել այն դրութիւնը, որի մէջ պիտի լինէր երիտասարդ, ուսման տագնապով այրուող եւ միեւնոյն ժամանակ ամեն միջոցներից զուրկ Թադէոսեանը . . . Մեծ դժուարութիւններով վերջապէս կրկին յաջողւում է Թիֆլիս գալ, բայց արդէն առանց որեւէ յոյսի հօր օգնութեան վրայ: Այստեղ՝ երկար պարապ մնալուց յետոյ՝ միջոցներից զուրկ, եւ շարունակ մի ինչ որ ստամոքսային հիւանդութիւնից տանջուելով՝ սկսում է այնուամենայնիւ երբեմն ընկերների եւ երբեմն Րաֆֆիի կամ իր մօր օգնութեամբ պատրաստուել Թիֆլիսի ուսուցչական ինստիտուտը մտնելու եւ 85 թուի սեպտեմբերին, յաջող քննութիւն տալով՝ ընդունւում է: Այդ ժամանակից Թադէոսեանին, շնորհիւ Րաֆֆիի եւ ուրիշ բարեկամների միջնորդութեան՝ օգնութեան է հասնում Հայոց Բարեգործական Ընկերութիւնը՝ վճարելով նրան տարեկան որոշ օժանդակութիւն:

Չորս տարի անցկացնելով Ինստիտուտում՝ 89 թուին նա աւարտում է առաջնակարգ աշակերտների շարքում եւ իսկոյն հրաւիրւում է Թելաւի Հայոց դպրոցը աւագ-ուսուցչութեան պաշտօնով: Մի տարի Թելաւում ծառայելուց յետոյ ստիպւում է հեռանալ այնտեղից եւ անց անցեալ սեպտեմբերին հրաւիրւում է աւագ-ուսուցիչ Ալէքսանդրապօլ ու միեւնոյն ժամանակ նշանակւում է Ալէքսանդրապօլու գաւառում Նրեւանի Թեմական տեսչի օգնական: Ահա այդ երկու պաշտօններումն էր Քրիստափոր Թադէոսեանը, երբ անցեալ դեկտեմբերին՝ Թոքերի բորբոքում ստանալով՝ յաւիտեան յաղթուեց անգութ հիւանդութիւնից:

Քրիստափոր Թադէոսեանի մահը կորուստ է ոչ թէ միայն մեր դպրոցների համար, այլ եւ առաւելապէս մեր մանուկ զրականութեան համար: Դեռ Ներսիսեան դպրոցի ատորին դասատուներից նա սկսեց գրել եւ փոխադրութիւններ անել զանազան քանաստեղծներից:

Նա աշխատակցել է «Մշակին», որին տուել է բացի մանր թղթակցութիւններից եւ մի գեղեցիկ պատկեր „Մեռած մարդու կենսագրութիւնը“ վերնագրով:

Նրա ինքնուրոյն քանաստեղծութիւնները միշտ սիրալիր ընդունելութիւն են գտել „Աղբիւրում“, „Տարազում“ եւ «Մուրճում“: Այդ հրատարակութիւններում գրուած են վերջապէս նրա սակաւաթիւ փոխադրութիւնները ռուս եւ եւրոպական քանաստեղծներից:

Նշանաւոր է, որ հանգուցեալի լիրան գլխաւորապէս կըռւի, աներկիւղ, աներկբայ կուի երգեր էին հնչում:

Ցիշենք վերջին քանաստեղծութիւններից՝ „Նա գնաց զոհվելու“, „Փոթորիկ“, „Ուղի“, „Երբ ալեկոծ ծովի վրայ“ . . . եւ ուրիշները:

Փոթորիկը վերջանում է հետեւեալ խօսքերով՝

Դէ, չտապիր, չտապիր, իմ նաւ սիրական,
Կամ ազատութիւն, կամ կռւի մէջ մահ. . .

«Ուղի» փոքրիկ եւ գեղեցիկ ոտանաւորի մէջ ահա ինչ ճանապարհ է ընտրում իր համար քանաստեղծը՝

Ուղի, ծնուել եմ ոչ անդորրութեան,
Ոչ աչխարհային վայելքի համար.—
Ես, իբրեւ գինւոր լոյս ճչմարտութեան,
Կռւի մէջ միայն կըգտնեմ դադար:

Միայն գաղափարին Թադէոսեանը հաւատարիմ է մնում «Երբ ալեկոծ ծովի վերայ». . . քաւականին ուժեղ զրւածքում՝

Ալիքները յորձանք տալով
Թէ դէպ անդունդ ինձ նետեն՝
Այն ժամանակ դէթ սփոփանք
Ես կըգտնեմ նըրա մէջ,
Որ մեռնում եմ քաջի նման,
Կռիւ տալով մինչեւ վերջ:

Ներկայ օրերում, երբ անտարբերութիւնը մեր հասարակութեան գլխաւոր յատկանիշն է, քանաստեղծի համարձակ յորդորները իրանց անհրաժեշտութեամբ աւելի են դառնացնում պատանի քանաստեղծի վաղահաս մահը:

Թիւրքահայաստանի վիլայէթները

Ամբողջ Թիւրքահայաստանը (եթէ հաշուենք նաև Դերսիմբէկլիքը) բաժանուած է լեռն վիլայէթների, որոնք են. 1. Վան, 2. Իրզրում, 3. Տրապիզոն, 4. Բիթլիս, 5. Հէքեարի, 6. Սվազ, 7. Մամուրէթիւլ-Ազիզ եւ 9. Դէրսիմ*): Այս վիլայէթները բաժանուում են սանջաքների (գաւառ), սանջաքները՝ քազաների (գաւառակ) և վերջիններս նահիյէների (հասարակութիւն): Վիլայէթի մէջ նստում է վալի—նահանգապետ, սանջաքի մէջ՝ միւթասարիֆ—գաւառապետ, Քազայի մէջ՝ Կայմագամ—կառավարիչ և նահիյէյի մէջ՝ միւտիր—տանուտէր. Բոլոր նահիյէները, քազաները և սանջաքները կախում ունին վիլայէթի վալիից որը մեկ վեզա է լենում: Օսմանեան կառավարութեան սալնամէները, այդ բոլոր լեռն վիլայէթների մէջ հաշուում են մօտաւորապէս 2,301,358 ժողովուրդ ոչ-մխսլիման և մխսլիման. այդ թիւի մէջ գանուում են հետևեալ ազգութիւնները՝ Թիւրք, յոյն, չերքէզ, լազ, հայ-բօշա, չինգենէ, արաբ (սակաւ), հրէայ, ասորի, կրզրլբաշ քիւրդ, եզիդի քիւրդ, մխսլիման քիւրդ և հայ: 1 ԷՐԶՐՈՒՄԻ վիլայէթ. Սահմաններն են՝ արևելքից՝ Կովկաս, հիւսիսից Տրապիզոն, արևմուտքից՝ Դէրսիմ և Սեաղ, բաժանուած է 4 սանջաքների, որոնք են.—Իրզրում, Բաբերդ—Բայբուրդ, Երզնկա—Իրզնկան և Բայազիդ. ա. Իրզրումի սանջաքը բաժանուած է 7 քազաների. որոնք են՝ Օվա. Բասկն, Թօրթում, Խնուս, Փղին, Դերջան և Քիաքիմ: Օվան բաժանուած է 15՝ Նահիյէների, Բասկնը՝ 5, Թօրթումը՝ 13, Խնուսը՝ 5, Փղին՝ 15. Դերջանը՝ 12 և Քիաքիմը՝ 5: բ. Բաբերդի սանջաքը ունի 4 քազաներ, որոնք են՝ Բաբերդ, Սալիը, Քաղկիթ, և Շէյխան: այս սանջաքներից իւրաքանչիւրը ունի 5—15 Նահիյէներ: գ. Երզնկայի սանջաքը ունի նոյնպէս 4 քազաքներ Երզնկա, Կամախ, Կրծանիս և Կուրոս չայ, սրանցից իւրաքանչիւրը ունի 5—9 Նահիյէներ: դ. Բայազէդի սանջաքը բաժանուած է 7 քազաքների և վրանաբնակ քիւրդերի 5 աշիրէթների (ցեղերի խումբ): Դրանք են՝ Բայազիդ, Դիադին, Կարա-քիլիսէ, Ալաշկերտ և Էնթաւի, Իսկ աշիրաթներն են՝ Զալալցի, Զիլանցի, Ադամանլի, Զիմադանլի և Սիբկհանլի քիւրդեր, որոնք բռնել են բարձր տեղերը "): Այդ քազաներից իւրաքանչիւրը ունի 2—5 Նահիյէներ: Էրզրումի վիլայէթի բաժանումները դրանցով վերջանում են: Ամբողջ վիլայէթի մէջ կայ 2866 գիւղեր, որոնց մէջ գանուում են շուրջ 103,536 տուն և 582,345 անձ այլ և այլն: Այս վիլայէթում հայերը ամենից շատ տեղ են բռնել Երզնկայի և Էրզրումի սանջաքներում. մնացած ազգութիւնները են՝ հայբօշա, քիւրդ, չերքէզ, Կրզրլբաշ-քիւրդ (Երզնկայի սանջաքում) և ասորի շատ սակաւ:

2. ՎԱՆԻ ՎԻԼԱՅԷԹ: Գտնուում է ձիշտ ալաբից սահմանին կից, չունի սանջաքներ, այլ մեկայն բաժանուած է վեց քազաների, որոնք են, Վան, Բերկրի, Շատախ, Ալջավազ-Գէվէշ և Մոկս: Բոլորը մեկտեղ բաժանուած են 11 Նահիյէների: Ամբողջ վիլայէթի մէջ գիւղերը հաշուում են 712, որոնց մէջ գանուում են 31,207 տուն, ընդամենը շուրջ 277,777 բնակիչ.

3. ՏՐԱՊԻԶՕՆԻ ՎԻԼԱՅԷԹ: Բռնել է Սև ծովի հարաւային եզերքի երկայնութիւնը, բաժանուած է 4 սանջաքների, որոնք են՝ Տրապիզօն, Լազիստան, Կիւմիւշ-խանէ, և Ջանիկ. ա. Տրապիզօնի սանջաքը բաժանուած է 7 քազաների, որոնցից իւրաքանչիւրը ունի 3—5 Նահիյէներ, բոլորը 13 Նահիյէ. բ. Լազիստանի սանջաքը ունի 4 քազա և 5 Նահիյէ: գ. Կիւմիւշխանէի բաժանուած է 2 քազայի և 3 Նահիյէի և 4. Ջանիկը՝ ունի 6 քազա և 3 Նահիյէ: Ամբողջ վիլայէթի մէջ հաշուում են 1686 գիւղ, 159,562 տնով և 430,041 բնակիչով: Տրապիզօնի վիլայէթի ազգաբնակութիւնները են հայ լազեր, յոյն լազեր, Թիւրք լազեր և վրացի լազեր, Թիւրքեր, յոյները, չերքէզները և սակաւ ասորիներ: Հայերը մեծ մասամբ տեղ են բռնել Տրապիզօնի սանջաքում՝ քաղաքի մէջ, Օլդուլ քազայում *):

4. ՀԷՔԷԱՐԻՒ ՎԻԼԱՅԷԹԸ, որ այժմ մեծացել է Վանի վիլայէթի հետ: Այս վիլայէթը բաժանուած է 3 սանջաքների, որոնք են՝ Էլբաղ կամ Բաշկալան: Ջուլամերիկ և Գէվէռ: ա. Էլբաղի սանջաքը ունի 5 քազա և 3 Նահիյէ: բ. Ջուլամերիկը 5 քազա և 2 Նահիյէ և գ. Գէվէռը 4 քազա և 3 Նահիյէ: Ամբողջ վիլայէթի մէջ հաշուում են 1367 գիւղ, 52,492 տնով և 135,492 բնակիչ: Ջուլամերիկի սանջաքի Կոջանիս գիւղում գանուում է ասորոց Մար-Շիմօնի Նահապետական տունը: Ասորիները ունին անառիկ դիրքեր և բոլորը զինուած են, ուր մի մխսլիման չի համարձակուում ոտք կոխել նրանց սահմանում. հաշտ են նրանք մխմայն հայերի հետ. անգլիական ազդեցութիւնը մեծ դեր է խաղում նրանց մէջ: Հայերը սեպի բնակուում են Գէվէռի սանջաքում:

5 ԲԻԹԼԻՍԻ ՎԻԼԱՅԷԹ: Վանի ծովի արևմտեան ափում, կից Էրզրումի վիլայէթին. բաժանուած է 4 սանջաքների՝ Բազէշ կամ Բիթլիզ, Սղերդ, Մուշ և Կիննճ: ա. Բազէշի սանջաքը ունի 3 քազա: Բիթլիզ, Խլաթ և Խոյթ. Նահիյէները չունի: բ. Սղերդ սանջաքը՝ 7 կազա և 7 Նահիյէ: գ. Մուշը՝ 4 քազա, որոնք են՝ Մուշ, Վարդօ, Բուլանըխ և Մանազկերտ և 6 Նահիյէ: դ. Կինջը 4 քազա, որոնք են՝ Կինճ, Ճապազ-Ջուր, Կողպ և Սասուն և 5 Նահիյէ: Ամբողջ վիլայէթում հաշուում են 1882 գիւղ, 49,617 տնով և 205,108 բնակիչով: Այս գիւղերից և բնակիչներից Սասունը ունի 48 գիւղ: Բիթլիզի սանջաքում թէ քիւրդերը և թէ հայերը կազմում են առանձին ընդհանուրներ: Քիւրդերը ցեղ առ ցեղ ունին նրանց ազաները և Սասունցոց այն մասը, որ գանուում է Սև-լեռների վրայ, ունին նրանց բէգը՝ Օհան քէհեան, որը շատ անգամ տուրք էլ չի տալիս և անկախի նըմանի է: Ասում են, որ այդ քէհեան ունի իր թիկնապահների խումբը՝ 500 ձիաւոր, որոնք սպառազինուած են քիւրդերից խլած մաըթիների հրացաններով և որոնք երբեմն ահ ու սարսափ են սփռում նրանց հանգստութիւնը վրդովել կամեցող քիւրդերի մէջ:

6 ՍՎԱՋԻ ՎԻԼԱՅԷԹ: Թիւրքահայաստանի ամենահեռաւորը՝ արևմտեան նահանգը՝ Անատոլիայի մօտ.

---

*) Այս վիլայէթներից երկուսը այսինքն վանը և Հէքիարին միացնելու համ մի վիլայէի շինելու վճիռը որոշուցաւ: Այսպէս ասելով Թիւրքահայաստանը ունենում է ութ վիլայէթներ, որոցից հանելով, դրսական անհանգած Դիադինը մնում է ևօթ զուտ հայկական նահանգներ (Վիլայէթ):

*) Այս 5 աշիրէթները ունին 8260 տան և 1620 վրանոց դրա տեղ են բռնել Բայազէդի և Ալաշկերտի մէջ և սիտուած են ամէն կողմ:

*) Այս վիլայէթումն են Թիւրքահայաստանի հին ամառանոցները, որոնք են Կ. Պոլսից սկսած.—Սամսօն, Ունիէ, Օրդու [Բուկլաբ-ամկիոն], Տրիպօլի Կիրեսօն և Տրապիզօն:

Ունի 4 սանջաքներ. Սվազ, Կարա-հիսար, Թօքաթ և Ամասիա: ա. Սվազի սանջաքը բաժանուած է 9 քազաների և 39 Նահիյէի, որոնց միջից նշանաւորներն են Սվազ և Աղճզիկ սանջաքները: բ. Կարա-հիսարը ունի 5 քազա և 6 Նահիյէ. նշանաւորներն են Կարա-հիսար շարքի (արևելեան) և Կոփլու-հիսար քազաները: գ. Թօքաթը ունի 4 քազա և 9 Նահիյէ. նշանաւոր քաղաքներն են Թօքատ և Սօնիսա: դ. Ամասիան ունի 6 քազա և 6 Նահիյէ: Այս բոլոր քազաների մէջ հաշուած է 364,937 բնակիչ: Հայերը աւելի շատ տեղ են բռնել Սվազի սանջաքի մէջ և Կարա-հիսարում:

7. ԴԷՐՍԻՄԻ ՎԻԼԱՅԷԹ: Գանւում է Էրզրումի, Խարբերդի և Սվազի վիլայէթների մէջ տեղում: Ունի երկու սանջաքներ՝ Խոզաթ և Մեծկերտ. առաջինը ունի 4 քազա և 3 Նահիյէ. նրկրորդը 4 քազա առանց Նահիյէների: Այս վիլայէթի մասին դեռ ևս կատարեալ տեղեկութիւնները չէ հաւաքուել և այդպէս Խոզաթ սանջաքի Խոզաթ, Զարսանջաք և Զմըլկածագ քազաների բնակիչների թիւը սալնամէների մէջ յայտնի չէ, նոյնպէս և Բախ և Կըզլ-քիլիսէ, Մեծկերտ սանջաքի քազաներինը. հաշուած է միայն 23,029 բնակիչ: Ուրիշ աղբիւրներից ևս՝ Դերսիմի վիլայէթը ունի 146,000 բնակիչ, որոնցից քիւրդերը են 100,000 և հայերը 30,000: Դերսիմի քիւրդերի մասին ասում են որ, ոչ մահմեդական են ու ոչ էլ քրիստոնեայ, աւելի հմամակրում են հայերին, մի մասը քրիստոնէական աղաւաղած պրպտողու. Թիւննեը ունի, իսկ միւսը Ալեվի ազանդին է հետևում, իրանց կանանց անուննների մէջ յաճախ պատահում են, Մարիամ, Սրբուհի, Մարգրիտ անուննները... ոմանք սոցա համարում են հայերը. որոնք բռնութիւնից և հալածանքից ստիպուած փոխել են լեզուն և աղաւաղել կրօնը *). այդ քիւրդերի ուխտաւորներն են հայոց աւերակ վանքերը և եկեղեցիները. . .

8) ՏԻԱՐԲԷՔԻՐԻ Վ.ԻԼԱՅԷԹ:--Մի-ջագետքի սահմանակից նահանգն է բաժանուած 3 սանջաքների.--Դիարբէքիր, Մէրդին և Մարդէն: 1) Դիարբէքիրի սանջաքը ունի 6 քազա և 21 Նահիյէ, գլխաւոր քազաները են Դիարբէքիր և Սիվրիք: 2) Մէրտինը ունի 6 քազա և 18 Նահիյէ. գլխաւոր քաղաքները են Զէզրէ և Մերտին. 3) Մարդէնը ունի 5 քազա և 6 Նահիյէ. գլխաւոր քաղաքները են Փալու և Մարդէն: Ամբողջ վիլայէթի մէջ հաշուում են 239,035 այր մարդ: Աւելի շատ հայերը գանւում են Մարդէնի սանջաքում՝ Բալու և իր շրջակայքը. Տիարբէքիր քաղաքի մէջ: Վիլայէթի գործածական լեզուն համարեա Թէ քիւրդերէն է:

9) ՄԱՄՈՒՐԻԷԹ-ԻԼ-ԷԱԶԻԶ ԿԱՄ ԹՈՒՐԲԵՐԻ:--Բաժանուած է 2 սանջաքների, Խարբերդ և Մալաթիա. առաջինը ունի 4 քազա և 5 Նահիյէ, իսկ երկրորդը 5 քազա 12 Նահիյէ: Գլխաւոր քաղաները, որոնց մէջ քաղաքներ և հայկական քաղաքներ կան՝ են Խարբերդ, Կասլան-Մաաէն, Աբարկեր, Էրկին կամ Ակն, Մալաթիա, Բէհէսնի և Ղազմանտեղ: Հայերը աւելի շատ բնակւում են Խարբերդ, Մալաթիա և Աբարկերի քազաներում և քաղաքներում, այսպէս միմիայն Խարբերդի մէջ հաշվում են շուրջ 34,754 այր մարդ (ոմանք 102,000):

Ուրեմն ամբողջ Թիւրքահայաստանում նստում են 8 վիլայեները (Վալի) 26 միւթէսէրիֆներ, 130 գայմագամներ և 322 միւդիրները, բոլորն էլ առանց բացառութեան Թիւրքեր,

---

*) Այս առթիւ ասեմ, որ Սղերդում կան մի քանի հրեայ գիտղեր, որոնց տղամարդիկ կրում են այսպիսի ականջներ՝ Մարտիրոս օղլի Մահմուտ, Կիրակոս օղլի Հասան: Պատմում են, թէ 60-ական թուականներում մահմեդականացած հայեր են դարձ եղ դրանց մահմեդականութեան պատճառը վանի հզնատիրոս եպ. առաջնորդն է եղել, որը խստիկ ոգևորվելով ուզել է ոտի ժամանակ սրահը ղուժել.

Թուրքահայաստանի 9 վիլայեթների բաժանումները

Ըստ օսմ. կառավարութեան 1880, 81 և 86 թուականի սալնամէների:

Թիւ.	Վիլայեթներ	Թիւ սանջակների.	Թիւ քազաների.	Թիւ Նահիյէների:	Վիլայեթի գլխաւոր քաղաքը.	Վիլայեթի ազանաւոր քաղաքները,	Գիտղերի թիւը.
1	Էրզրում.	4	20	142	Էրզրում.	Էրզրում, Բաբերդ, Երզնկա, Հասան—Ղալա.	2860
2	Վան.	—	6	11	Վան	Վան, Բերկրի. Մոկս, Ալանց և այլն.	712
3	Տրապիզօն	4	19	24	Տրապիզօն	Տրապիզօն, Կիրասիշխանէ, Տիրեօլի, Օրդու, Կերասօն, Սամսօն և այլն	1686
4	Հէքնարի	3	14	8	—	Պաշկալէ, Կոչհիսար և այլն.	1367
5	Բիթլիզ	4	19	18	Բիթլիզ	Բիթլիզ. Մուշ Սղերդ, Մանազկերտ, Խիզան:	1882
6	Սվազ	4	18	54	Սերաստիա	Սերաստիա. Ամասիա, Թօքաթ. Սունիսա, Տիվրիկ, Մերզիֆոն	1750
7	Դերսիմ	2	8	3	Խօզաթ	Մանզկերտ և Խօզաթ, Զարսանջաք.	787
8	Դիարբէքիր	3	17	45	Դիարբէքիր	Բաղռ, Տիարբէքիր, Մէրտին Մարտէն(ճկգրէ և այլն.	1842
9	Խարբերդ	2	9	17	Խարբերդ	Խարբերդ, Արաբկեր, Մալաթիա. Ակն և այլն	1153
	Գումարն է	26	130	322	8 վալի	38 գլխաւոր քաղաք.	14,045

Վ. Փափազեանց.

Քաղաքային ընտրութիւնների առիթով 13 յունվ. 1891

Ա. Ս. Մատինեանցը ծնեալ է Թիֆլիսում, 1843 Թվին. Թիֆլիսի 1-ին գիմնազիայում ուսման ընթացքն աւարտելուց յետոյ, 1862 Թվին մտնում է Մոսկուայի հասարակական բաժինը, ուր և 1866 Թվին աւարտելուց յետոյ Կովկասի նշանառութեան հասարակութեամբ Թոյլ է տրւում նրան էլի մի տարի մնալ գործնականապէս զբաղուելու Մոսկուայի նահանգական դատարանի դատախազի մօտ։ 1867 Թվին ուղարկւում է Քութայիսի նահանգը՝ Քութայիսի և Շօրասպանի գաւառական վարչութիւնների գործերը կարգի բերելու համար, իսկ 1869 Թվին դատաստանական բէֆօրմ մտցնելուց յետոյ նշանակւում է Թիֆլիսի 2-րդ բաժանմունքի հաշտարար դատաւորի օգնական։ Այդ պաշտօնում ալ. Մատինեան վարում էր նաև դատաստանական քննչի պաշտօնը, ապա յետոյ մինչև 1877 Թիւը առանձին բաժանմունքում հաշտարար դատաւորի պաշտօն էր կատարում։ 1877 Թվին հրաժարական տալով, ընտրւում է Թիֆլիսի քաղաքային վարչութեան անդամ, իսկ 1879 Թվից ընտրւում է Թիֆլիսի քաղաքագլուխ։

Դ. Դ. Ագուլհանեանի հետ կաշխատակցելով տէրլինեելով Ա. Ս. Մատինեան 1879 Թվից գործարանը կառավարելու մէջ մասնակցութիւն չի ունենում, այլ ամբողջովին հաւատում է Ի. Դ. Ագուլհանեանցին։ Պ. Մատինեանցը Թիֆլիսում Սապէօրնի վողոցի վրայ երկու տուն ունի։

Ի հա մինչ այսօրեայ տեղը չէ կանգ առնել Ա. Ս. Մատինեանցի, որպէս քաղաքագլխի գործունէութեան վրայ։

Նոյն իսկ նրա կատարի հակառակորդները էլ չեն կարող չխոստովանիլ, որ նրա՝ քաղաքագլխի պաշտօնավարութեան ժամանակ քաղաքը կերպարանափոխուեց և մեծ հետքեր թողեց տեղական վարչութեան ճանապարհի վրայ։ Ի դէպ, այստեղ առաջ ենք բերում Ճիշտ Թւականները ընտրողական և ոչ—ընտրողական ձայների, որ նա ստացել է նախկին քէշսիրութիւնների ժամանակ քաղաքագլխի պաշտօնի համար։ 1879 Թվին, երբ նա առաջին անգամ ընտրւեց, նա ստացաւ 31 ընտրողական և 23 ոչ-ընտրողական ձայն։ Երկրորդ ընտրութեան ժամանակ, 1883 Թվին, նա ընտրւեց 47 ձայների մեծամասնութեամբ ընդդէմ 21-ի, վերջապէս 1887 Թվին քաղաքագլխի բազմաթուռը նրան տրւեց 55 ձայների առաւելութեամբ ընդդէմ 9-ի։

Ա. Ս. Մատինեանց Թիֆլիսի քաղաքագլուխ։

Զուբալով Թեկնածու քաղաքագլխի պաշտօնի։

Ն. Դ. Զուբալովը ծնւել է 1835 Թ. սեպտեմբեր 25-ին Գօրի քաղաքում (Թիֆ. Նահանգ), իր սկզբնական կրթութիւնը ստացել է Թիֆլիսում, Բաւսկու մասնաւոր գիշերօթիկ ուսումնարանում։ Ուսման ընթացք աւարտել է 1854 Թ. Մոսկուայի հասարակական իրաւաբանական բաժնում։ Հէնց այդ Թվից էլ շարունակ տրքունական ծառայութեան մէջ է լինում, որ սկսում է Քութայիսում 1853—1856 Թւականներին, արևելեան պատերազմի ժամանակ։ 1868 Թ. նախ քան մեր երկրում դատաստանական բէֆօրմ մտցնելը պ. Զուբալով նախագահ էր երկրաչափական յանձնաժողովի, իսկ դատ. բէֆօրմ մտցնելու րոպէից սկսած մինչև օրս վարում է Թիֆլիսի 4-րդ բաժանմունքի հաշտարար դատաւորի պաշտօնը։ Որպէս դատաւոր նա արժանացել է իշխանութիւնից արտասովոր պարգևի—խսկական պետական կարգադրականի աստիճանի, իսկ ժողովրդի մէջ յայտնի ժողովրդականութիւն է վայելում։

Որպէս ձայնաւոր Ն. Դ. Զուբալովը իր գործունէութիւնը սկսել է հօթաչնանական Թւականներին։ 1879 Թ. մասն. յանձնաժողովը մատնացոյց արաւ նրան որպէս Թեկնածու քաղաքագլխի, բայց քաղաքային կորհուրդը չընտրեց։

Այդ բանից յետոյ, համարեա հէնց այն րոպէից, երբ Ա. Ս. Մատինեանցը քաղաքագլուխ է ընտրւում, սկսւում է Ն. Դ. Զուբալովի քաղաքային վարչութեան հետ յայտնի վիճաբանութիւնը, որ վերջացաւ սկանդալով, և որի համար հաշտարար դատաւորը դատապարտեց վարչութեան անդամ Ա. Ա. Թամամշևին, հօթինօբեայ բանտարկութեան այն վիրաւորանքի համար, որ հասցրել էր խօսքերով Ն. Դ. Զուբալովին քաղաքային կորհրդի նստի ժամանակ։ Այդ անհնայ վիճաբանութեան մէջ Ն. Դ. Զուբալով երևաց որպէս շատ "կծու„ և ճարպիկ վիճաբան, իսկ վարչութիւնը վիճելի կնդրի վերաբերմամբ հրան մի մազի չափ անգամ չզիջաւ. Այդ ժամանակից Ն. Դ. Զուբալովը դադարում է քաղաքային կորհրդի նիստերին յաճախելուց։

Нов. Обоз.

օրագրութիւն.

Այսօր կիրակի, յունւար 13-ին Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան դատ-լիճում հրաւիրւած են նորընտիր իրաւասուները քաղաքագլուխ ընտրելու համար։

Ուշադրութեամբ հետևելով այն բոլոր ազգ. աշխուժներին, որոնք տեղ ունեցան ձայնաւորների ընտրութեան ժամանակ և ի նկատի առնելով կրօնական եռուն վէճերն ու խնդիրները, չենք կարողանում յուսալ, որ ընտրութիւնները խաղաղ անցնեն։ Եղած կանդիտատների մէջ ամենայարդելին է ներկայ քաղաքագլուխ պ. Ա. Ս. Մատինեանցը, իսկ միւս Թեկնածուն համարւում է մի կրօնական կողմից պ. Զուբայով։ Վերջինս ընտրութեան համար որոշ նախապատշաճութիւն անելը դժւար է,—տերպատեաղ կարծիքն է, որ կրկնորնտրւի պ. Մատինեանցը։

ՀԼՑՆԼԻՑ

Ես տեսայ երազ. խուլ անապատում,
Սառ ժայռոյի մէջ ահեղ փաթաթուած,
Միայնակ, ձիւնաթաղ պառկած էի ես,
Գերեզմանական սառ քուն ընկղմած:

*

Վեր վայրում էին անհամար աստղեր,
Ես գերեզմանից ուղղակի նայում.
Նրանց հայեացքները սէր էին շնչում,
Եւ սառած սիրտս նոր կեանք էր զգում:

Ք. ԹԱԴԷՈՍԵԱՆՑ

Խմբագրութեան կողմից.

Անցեալ շաբաթ Աղէքսանդրապօլում վախճանած մեր երիտասարդ աշխատակից Քրիստափոր Թադէոսեանի մի շարք բանաստեղծութիւնները եւ նրանց զրած նրա ժամանակին հերոսը վէպը կը տպագրուին Տարազում:

—

Ընթերցողների յարմարութեան հնարաւ այսուհետեւ Փարիզի մօդաները Տարազում կը տպագրուին ամիսը մի անգամ՝ ինչպէս անում են պատկերազարդ հանդէսները:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Հինգշաբթի առաջ տասին Թիֆլիսի Միքայէլեան հիւանդանոցում բժիշկ Մայսուրեանցը առաջին անգամ կատարեց դէ. Կօխի հնարած հեղուկի սրսկումը չորս հիւանդների կաշուի տակ: Փորձին ներկայ էին հարիւրից աւելի բժիշկներ, Թիֆլիսի քաղաքագլուխը, Կովկասեան բժշկական վարչութեան կառավարիչ Գլավացկի և ուրիշ շատերը: Փորձերն սկսելուց առաջ, բժիշկ պ. Մայսուրեանցը երկար ճառով հաղորդեց ներկայ եղողներին այն տպաւորութիւնները, որ նա ստացել է իր Բերլինում դտնուած ժամանակ, թէ ինչ հետեւանքներ են ունեցել Կօխի հեղուկի սրսկման դանազան փորձերը և այլն: Պարոն Մայսուրեանցը իր հետաքրքիր ճառից յետոյ ուղղակի սկսեց փորձերը հիւանդանոցի օպէրացիական դահլիճում: Փորձերը կատարուեցան չորս հիւանդների վրայ, որոնցից մէկը կին է 20 տարեկան, իսկ երեքը տղամարդ՝ առաջինը 55 տարեկան, երկրորդը 35 և երրորդը 34 տարեկան:

—

Հիւսիսային դործակալութեան հեռագիրը հաղորդեց որ տաճկաց Սուլթանը չնորհել է ներումն հայ յեղափոխական յանցաւորներին և արդէն 76 հայ բանտարկեալներ արձակուած են բանտից:

—

Մեզ հասած տեղեկութիւններին լսելով, Թիֆլիսում մտադրութիւն կայ հիմնել գիւղատնտեսական կլուբ: Այդ տեսակ մտադրութեան վրայ կարելի միայն ծիծաղել: Զենք կարող հասկանալ, թէ ինչ նշանակութիւն ունի գիւղատնտեսական կլուբը. մեր կլուբներն ինչ կերպարանք են ստացել, յայտնի է արդէն—թղթախաղ, նարդի, բիլիարդ, ահա մեր կլուբների մէջ տիրապետող զարճութիւնները. դեռ այդ եղած կլուբները պէտք է մի քիչ աղնւացնել և մօտեցնել ընկերականութեան, ապա մտածել գիւղատնտեսական կլուբի համար: Եւ վերջապէս մենք ունենք այստեղ Թիֆլիսում մի «Գիւղատնտեսական ընկերութիւն», որ ունի իր սեփական չինութիւնը, իր զրադարանը, իր փոքրիկ թանգարանը, պահում է մի ամբողջ այդ-դործական դպրոց: Այդ ընկերութեան մէջ չարունակ լինում են ժողովներ, կարդացւում են ըէֆէրատներ, զարթեցընւում են չատ կարեւոր, կենսական խնդիրներ. աւելի լաւ չէր լինի որ կլուբամոլ պարոնները իրանց ուշադրութիւնը դարձնէին այդ վերին աստիճանի պատկառելի ընկերութեան վրայ և իրանց անելիք օդնութիւնն անէին այդ ընկերութեան: Ինչ կարելի է սովորել կլուբում—ոչինչ: Իսկ ընկերութեան մէջ—չատ բան:

—

Մեզ հաղորդում են, որ պ. Ֆօրկատին իրրև թէ բանակցութիւն է սկսել սիեդերահռչակ դրամատիքական դերասանուհի Սառա-Բերնարի հետ և նրան հրաւիրում է առաջիկայ դարնանը Թիֆլիս մի քանի ներկայացում տալու: Սառա-Բերնարը 40 հազուց բազկացած իր խմբի հետ նորերս վերադարձել Ամերիկայից այժմ էլ Աւստրալիա է դնում:

ԴԵՂԱՐՏԱՏՈՒ.

Թատրոն.

Ամսոյս 16-ին, չորեքշաբթի պ. Պետրոսեանցը հայ նախկին թատրոնական խմբի մասնակցութեամբ Թիֆ. ազն. բանկ. թատրոնում կը տայ իր առաջին ներկայացումը։ Նրանք, որոնց համար թանդ է հայ թատրոնը, անչուշտ պիտի աջակցեն պ. Պետրոսեանին իր դիտաւորութիւնը իրագործելու։ Պ. Պետրոսեանը խոստանում է Թիֆ. հայ թատրոնական գործը առաջ տանել առանց մասնաւոր օժանդակութեան։ Միակ աջակցութիւնը, որ նա խնդրում է, այդ այն է, որ Թիֆ. հայը թատրոն յաճախէ և տեսնէ, եթէ յիրաւի պ. Պետրոսեանցի խումբը բարեխղճաբար կատարում է իր ստանձնածը, չարունակէ թատրոն դալ։ Դա պ. Պետրոսեանցի կողմից մի արդար պահանջ է և մենք մեծայոյս ենք, որ Թիֆ. հայ հրիտասարդութիւնը թև ու թիկունք կը լինի այս նոր խմբին թատրոն յաճախելով։ Առաջին անգամ կը ներկայացնեն «Ռուիէլ Ակօստա» դրաման, իսկ հետևալ անգամ «Ավազակները» և այլն։ Ինչպէս լսում ենք պ. Պետրոսեանցի խմբի մէջ է և մի չնորհալի նոր դերասանուհի. ասում են Տաճկաստանցի է։

—

Ֆօրկատու դրամատիկական խմբի ներկայացումները սկսուեց ամսոյս 9-ից։ Առաջին անգամ ներկայացրին *Тигяна Репина* Սուվորովի պիէսը։ Տատիանի դերը կատարում էր տիկին Մայերովան, որ իր դեղեցիկ խաղով յուզեց հանդիսականներին։ Թատրոնը կիսով չափ դատարկ էր։ Այդ պիէսը, որ մայրաքաղաքի բեմի վրայ էլ մեծ յոջողութիւն է ունեցել և աղմուկ հանել, Թիֆլիսում խաղացել է և՞ս. Յամենայն, սակայն համարձակ կարելի է ասել, որ տ. Մայերովան այս դերը Յամենայից ոչ պակաս յաջողութեամբ կատարեց, ի բաց առնելով երրորդ գործողութիւնը, ուր չարդելի դերասանուհին, որ վըշտից խմել, հարբել էր, նմանում էր ուևլի խելագարի, քան թէ հարբածի։

Ամսոյս 10-ին էլ նոյն խումբը ներկայացրեց *Нина* նոր պիէսը։ Բայց բարեբախտաբար թատրոնը համարեա դատարկ էր և մեր կարծիքով այդ յօգուտ Ֆօրկատու։ Ինչ չահ ունի ինքը պ. Ֆօրկատին այդ տեսակ անմիտ պիէսներ դնելուց։ Ինչո՞ւ էր այդ պիէսի անունը *Нина*, քանի, որ Նինան այդտեղ մի մեծ դեր չէր կատարում։ Անչուշտ Ֆօրկատին կամեցել է *Нина* անունով գրաւել հասարակութիւնը։ Գոնէ պահէր այդ պիէսը վաղը, որ Նինայի տօն է, այդ օրը դնէր, գուցէ այդ գրաւէր հասարակութեանը։ Թէ այսպէս և թէ այնպէս ցանկալի է, որ այդ տեսակ անմիտ պիէսներ պ. Ֆօրկատին չը դնէր բեմի վրայ, հաւատացած լինելով, որ սուկ անուններով հիացողներ շատ քիչ կը գտնուին։

Երաժշտութիւն.

Այս օրերս Թիֆլիս է եկել մի հայ երգչուհի, որ ունի շատ քաղցր և տպհուն սոպրանօ ձայն։ Այդ օրիորդը կոչւում է Մարիամ Մսերեանց. Նա բեսարաբեացի է. մտադիր է մի քանի կօնցերտներ տալով միջոց ձեռք բերել Իտալիա գնալու կատարելագործելու համար իր ձայնը։ Օր. Մըսերեանցը մի քանի ամիս առաջ վայելուն կօնցերտներ է տւել Կ. Պօլսում. „Արևելք“ լրագիրը ահա Թէ ինչ է ասում Նրա մասին.

. . . „Պօլսոյ մէջ, համարձակապէս կարելի է զուրցել, որ դեռ չենք լսած ձայն մը այդքան յորդելու եւ քաջկոր. ամէնէն բարձրը խազէն մինչեւ ամէնէն մեղմ իջնելով հեշտալուր ներդաշնակութեամբ Իր երգած ռուսական երգերուն ոգին, մերթ վայրագ ու ուժգին ու մերթ հեզիկ քաղցրամեղիկ, այնքան ճշտութեամբ ի յայտ կը բերէ, որ յուզումը կը ծնչէ սիրտդ։ Օր. Մսիրեանց ունի մանաւորապէս հայկական ընդածնի պարկեշտութիւն...“։

Այդ Կ. Պօլսի կօնցերտից յետոյ, օր. Մսերեանցը կորցրեց իր մայրը և այժմ լիովին որբացած՝ յոյս ունի միջոցները գտնել իր տաղանդը կատարելագործելու Իտալիայում։

Նրա առաջին կօնցերտը բարեհոգի երգիչ Բ. Ամիրջանեանցի ընկերակցութեամբ տեղի կունենայ մօտ օրերս։

Ցոյս ունինք որ հայ հասարակութիւնը ամեն կերպով կաջակցէ տաղանդաւոր հայ երգչուհուն։

—

Տեղական ռուս լրագիրները հաղորդում են որ այս օրերս Թիֆլիս կըզայ Նշանաւոր երգչուհի Նիկիտա (Նիկոլսոն) կօնցերտներ տալու։

Նկարչութիւն.

Վ. թայի երիտասարդ նկարիչ պ. Գաբաեվ բացել է ցուցահանդէս իր նկարների։ Ցուցահանդէսը գտնուում է Դվօրցովի փողոցի վրայ Սարաչևի տանը, երեք մեծ դահլիճներում։ Պարոն Գաբաևը իր նկարների նիւթը մեծաւ մասամբ առել է Կովկասեան կեանքից և բաւական շատ Կովկասեան տիպեր ունի նկարած։ Երիտասարդ նկարիչը ունի վերին աստիճանի գեղեցիկ կոլորիտ, որ մասամբ նմանում է ռուս երևելի նկարիչ Մակովսկու կոլորիտին։ Մենք ինչպէս լսեցինք, պ. Գաբաեվ մտադիր է դնալ արտասահման կատարելագործելու և այդ ցուցահանդէսը նա բացել է իր նիւթական միջոցները քիչ ուղղելու համար. բայց շատ ցաւալի է տեսնել, որ Թիֆլիսի հասարակութիւնը շատ քիչ է յաճախում ցուցահանդիսին։ Ցանկալի է որ հայ հասարակութիւնը քաջալերէ այդ երիտասարդ նկարչին, որ մեծ յոյսեր է տալիս։

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

„Новое Обозрѣніе“ լրագիրը վերջին ժամանակներս իր ամբողջ գոյութիւնը նւիրել է քաղաքային ընտրութիւնների խնդրին. չըհաշուած այն բազմաթիւ առաջնորդողներն ու փելէտօնները, որ „Н. О.“ ամէնների ընթացքում նւիրել է այդ ընտրութիւններին, երբև որոշ կուսակցութեան ներկայացուցիչ, այժմ էլ սկսել է տպագրել բոլոր ձայնաւորների կենսագրութիւնները։ Այս տեսակ մի ձև մինչև այսօր մեր մամուլի մէջ չէ եղած և դժուար Թէ կենսագրական մանրայոյզ բռնուած գրագէտները մեզ կարողանան ցոյց տալ այդպիսի բան և արտասահմանի մամուլի մէջ, Թէ Ինչ մի բարոյական նշանակութիւն ունին այդ տեսակ կենսագրութիւնները, և Թէ քիչ շատ նրանց յարգող ձայնաւորները ինչպէս կըվերաբերուեն դրանց, այդ շատ լաւ երևում է բժիշկ Մալինինի նամբագրութեան ըրկած պատասխանից և պ. Իզմ-այլովի մի փոքրիկ ոտանաւորից։—Ահա Թէ Ինչ է պատասխանել բժիշկ Մալինինն „Н. О.“ նամբագրութեան, երբ վերջինս խնդրել է Նրա կենսագրութիւնը.

„Ես ծնուել եմ 1832 Թուին, Թէ երբ կրմտնենմ—չգիտեմ։ Մինչև 22 տ. հասակս ինձ սովորեցրել են, իսկ 22 տարեկանից սկսած ես ինքս եմ սովորում։ Մասնագիտութիւնս բժշկականութիւնն է. Հիւանդ մարդկանց երրեմն ճանաչում էի շատ յաջող, իսկ առողջների վերաբերութեամբ միշտ սխալուել եմ և սխալւում եմ.“

Օգուտ քաղելով այդ հանգամանքից, „Тифлисскій Листокъ“ի տաղանդաւոր աշխատակից Զօլլը ըսկսել է իր փելէտօններում մի շարք կենսագրութիւններ զանազան Ձայնաւորների։ Զօլլի գրչին յատուկ լինքնուրոյնութիւնը և նրա աներևակայ ու հալեցնող նւմօրն արդէն յայտնի է դեռ այն ժամանակից, երբ այդ երևոյթների հրապարակախօսը լսին ասպարէզ ունէր „Нов. Обоз.“ Թերթում, Նրա հանգուցեալ նամբագիր Ստեպանովի օրով։ Վերջին փելէտոնում Զօլլը հնանալի կերպով է նկարագրում երկու սպգերի կենսագրութիւնը, այն է պ. Մաչաբելիի և Ա. Յովհաննիսեանի։ Բերում ենք այստեղ մի քանի կտոր երկրորդ Ձայնաւորի համար ասածից.

Ա. Ա. Յովհաննիսեան.—Ժուրնալիստ, ֆինանսիստ և թուլումբաշ (Թամադա)։ Նրա մէջ ժուրնալիստը ֆինանսիստից բարձր է, իսկ թամադայական հանճարը մ'Թնացնում է մնացած երկու յատկութիւններն էլ. Լաւ է ապրում, բռնվիվանէ ու քէֆ է անում։ Ունի գրիչ, ճարտարախօսութիւն և ահագին ախորժակ. Ճարտարախօսութիւնն աւելի է զարգացած քան գրիչը, իսկ ախորժակը գրչից աւելի ուժեղ է. Արտասահմանի կեանքը ուսումնասիրել է շատ հիմնաւոր

կերպով. Բերլինում նա ուտում էր սիսեռով երշիկներ. Վիէննայի գեղեցկուհիների հետ տաք վիճաբանութիւններ է արել իշխան Միտիրնիխի քաղաքական սխալների համար, Պետերբուրգում իր կարդացած Պիսարեւի յօդուածների տեսակէտից. Միւնխենում գովաբանել է Բավարական գարեջուրը. Յորասբուրգում խժռել է տեղական փախլաւան, նաւակով գրօսնել է Ժընեւայի լճի վրայ. Իշի վրայ նստած բարձրացել է Հարց լեռան գլուխը, այնտեղից զարմանալու չվէյցարական արեւգակի ծագումով, եւայլն, եւայլն.

Քամելով մինչեւ տակը արտասահմանեան զարմութիւնների քաղցրութեան բաժակը, նա վերադարձաւ հայրենիք եւ բերաւ իր հետ—արտասահմանեան դիպլօմ ամենայն տեսակ փիլիսոփայութեանց եւ իրաւանց, ֆրանսիական լեզու, ամենանուրբ հմտութիւններ ֆրանսիական խոհանոցի մասին եւ շատ նուրբ ճաշակ ֆրանսիական խմիչքների.

Այսպէս է գրում պատմութիւնը:

Ահա եւ պ. Իզմայլովի պատասխանը „Нов. Обоз.“ հարցումին „Չիմնարկոր գրածքներ չունեմ; բացի մի ոտանաւորից: Այդ ոտանաւորը փոխադրութիւն է Ն. Նեկրասձէի մի արձակ Փէլիէտօնի որ տպագրուել է 1873 թւի Тифл. Вѣстн. յրագրում: Ահա ոտանաւորի սկիզբը

„Ես հեռանում եմ՝... վճռած է,
Երկար, երկար ժամանակով թողնում եմ
Այն ամենը՝ ինչից զգուել եմ վաղուց
Ամենն, ինչի հետ չէ կարելի հաշուել
Եւ ինչի հետ ես չեմ ուզում՝ հաշուել.
Ես մտքերով արդէն հեռու եմ;
Ես չեմ՝ ապրում՝ եւայլն, եւայլն:

18 տարուց չետոյ լաւ պարգեւ է ուղարկում պ. Իզմայլով իր հին ընկերներին:

Շ Ա Խ Մ Ա Թ

Ի Ն Դ Ի Ր № 2

Սպիտակները սկսում են և երեք ընթացքում տալիս են մաթ.

Սեւերի կողմը:



Սպիտակների կողմը:

սուրիանդակ

Փարիզ. Պ. Պ. Բարեհամբերէք մտածելու.— Իրա՞ւնդիան աւելի մօտ է Եւրոպային թէ Փորր Ափան: Մի՞թէ քաղաքականութեան համար ասւած կոմպլիմենտները կարելի է ընդունել իբրեւ սրտի անկեղծ զգացմունքներ Մենք չենք ուզում այնքան միամիտ լինել որ մեզ յիմար անուանեն: Պետերբուրգ. ալ. լ. Շնորհակալենք. չենք ուզում կեղծել եւ ծածկել մեր ուրախութիւնը ձեր տամակրութեան համար. քանց դեռ սպասեցէք մինչեւ մենք մեր պարտքը լիւր կատարենք: Կ. Պօլիս.—Ա—Ֆ. Բէօրնէն ծիծաղում էր այն մարդկանց վրայ, որոնք կամենում էին սատանային դուրս անել Բեհեղզեբուղի միջոցով. մենք էլ ենք ծիծաղում.

Խմբ.-հրատ. Տ. Նազարեան

Հայոց Թատրոն

Չորեքշաբթի յունուարի 16-ին
ԹԻՖլԻՍԻ ԱԶՆԻՒԱԿԱՆՆ. ԲԱՆԿԻ ԹԱՏՐՈՆ.
Պ. ՊԵՏՐՈՍԵՑՆՑԸ
կ Ը Տ Ա Ց
Մասնակցութեամբ Հայ դերասանական
խմբի առաջին անգամ
ՈՒՐԻԷԼ ԱԿՕՍՏԱ
Ողբերգութիւնը 5 գոր. Հեղ. Հուցկովի
թարգմանութիւն Մ. Մ. Աւալեանցի:
Անցքը պատահում է Ամստերդամ
1640 Թուականին
Սկիզբն է 8 ժամին երեկոյեան
Տոմսակները կարելի է ստան. թատ. կաս.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ յունուարի 2-ին տեղի ունեցած առաջին նեբրին փոխառութեան խաղարկութեան տոմսերը տարել են 500 ական բուբլի:

№ տոմս.	№ սերիի	№ տոմս.	№ սերիի	№ տոմս.	№ սերիի
1	2,186	6	8,615	11	8,457
1	4,209	6	12,750	11	15,607
1	9,963	6	14,441	11	17,141
1	10,754	6	15,169	12	12,613
1	16,984	6	15,655	12	12,655
2	5,056	6	17,853	12	14,629
2	6,005	7	3,384	12	18,759
2	8,825	7	3,795	13	11,665
2	12,737	7	7,245	13	13,693
2	18,343	7	9,126	14	2,943
2	19,961	7	13,835	14	3,146
3	1,545	7	18,304	14	12,134
3	3,137	8	551	14	14,472
3	5,952	8	5,348	14	15,892
3	10,401	8	6,271	15	733
3	11,400	8	8,561	15	4,082
3	14,113	8	9,837	15	9,699
3	19,968	8	10,062	15	15,707
4	4,629	8	10,791	16	963
4	7,015	8	12,484	16	6,366
4	10,455	8	12,917	16	6,526
4	12,610	8	18,553	16	8,781
4	17,463	9	719	16	10,423
5	4,446	9	7,085	16	19,426
5	6,784	9	7,237	17	3,278
5	10,612	9	11,039	17	6,779
5	14,020	10	4,629	17	13,275
5	15,169	10	5,829	17	16,455
5	15,202	10	7,000	18	2,862
5	17,591	10	13,729	18	3,153
5	18,019	10	17,363	18	9,956
6	2,881	11	6,322	18	13,527
6	7,498	11	6,959	19	39
19	484	27	9,005	36	15,953
19	3,203	27	10,260	37	16,780
19	4,496	27	12,101	37	19,483
19	11,530	27	18,838	38	5.004
19	16,474	28	2,227	38	5,170
19	17,034	28	5,190	38	11,721
20	3,445	28	7,512	38	11,813
20	9,505	28	7,830	38	12,025
20	16,967	28	11,266	38	14,439
20	18,354	29	912	38	14,740
21	74	29	6,179	38	15,041
21	1,543	29	8,363	38	15,652
21	1,628	29	14,656	38	16,169
21	5,713	30	7,900	38	17,882
21	9,386	30	8,301	38	19,997
21	10,965	30	8,483	39	832
21	11,413	30	13,543	39	4,304
21	11,906	30	13,581	39	4,450
22	12,357	30	13,615	39	14,153
22	14,809	30	17,846	39	15,060
22	17,719	31	2,343	39	18,874
22	18,534	31	9,903	40	2,200
23	6,054	31	11,919	40	16,088
23	8,488	31	15,312	41	5,534
23	9,120	32	3,294	41	5,783
23	15,140	32	3,825	41	7,523
23	15,405	32	9,221	41	15,501
23	18,128	32	9,609	41	19,047
23	18,184	32	13,518	42	1,712
24	4,639	32	14,780	42	3,056
25	1,266	33	2,858	42	6,738
25	9,544	33	16,966	42	14,829
25	10,668	33	17,610	43	14,883
25	12,655	34	10,618	43	18,303
25	18,512	34	13,690	44	760
26	3,016	35	1,895	44	2,583
26	3,424	35	5,904	44	2,583
26	3,891	35	7,065	44	6.725
26	11,334	36	78	44	10,751
26	11,961	36	890	44	12,272
27	7,830	36	8,638	44	14,160
27	8,161	36	15,120	44	15,097
45	1,993	47	19,826	49	7,400
45	7,940	48	55	49	7,503
45	17,064	48	97	49	9,647
46	1,486	48	3,719	49	10,975
46	5,273	48	4,361	49	12,106
46	6,439	48	5,012	49	16,373
46	11,309	48	9,399	50	1,091
46	17,989	48	9,659	50	3,288
47	10,100	48	13,354	50	4,230
47	13,347	48	14,319	50	7,004
47	14,388	48	14,580	50	8,024,
47	18,165	49	3,357		

Հանգրւած—տիրած տոմսերի

սերիաներբը:

8,338, 5,383, 7,113, 7,549, 17,595, 9,077, 9,676, 10,193, 12,737, 1,045, 4,325, 2,494, 13,179, 11,300, 13,151, 1,479, 14,576, 16,018· 19,778, 7,942, 18,105, 12,348, 194, 7,294· 19,595. 9,611, 3,929, 15,134, 5,261, 3,508. 17,449, 5,963, 7,971, 15,088, 17,249, 12,934 11,113, 18,030, 6,857, 4,384, 10,998, 16,620 16,394, 4,941, 18,754, 4,318, 18,919, 18,647 4,673, 15,046, 11,325, 12,980, 2,383, 8,545 14,168, 19,733, 14,622, 14,997, 14,684. 5,800, 11,161, 12,069, 1,602 7,654, 1,830, 16,401, 18,438, 4,701, 7,528, 5,951, 15,219, 11,261, 6,311· 13,313, 17,850, 2,982. 78, 16,080 13,576, 9,614. 11.514. 15.397, 6,361, 4,222, 4.808, 19,444, 16·764, 17,156, 1,322, 7,333. 4,851, 10,373 12,046, 5.515. 17,287 7,189.

Պատկերազարդ Աղբիւր ամսագրի եւ Տարազ շաբաթաթերթի ներկայ 1891 թ. բաժանորդագրութիւնը շարունակւում է: Թէ Աղբիւրի արդէն ամսոյս 1-ին լոյս տեսածը եւ թէ Տարազի ներկայ №-ը ուղարկւել են միմիայն նրանց, որոնք նորոգել են իրանց բաժանորդագրութիւնը: Ապառիկ կամ մաս-մաս վճարելու պայմանով բաժանորդագրութիւն չէ ընդունւում եւ այդ պայմանով մեզ դիմողների առաջարկը թողնւում է մեր կողմից առանց բաւարարութեան:

Աղբիւրի տարեկան բաժանորդագինը 3 ր.—28 կ. արտասահման 4 ր., Տարազինը 6 ր. արտասահման 7 ր. կամ 20 ֆռանկ:

Հասցէն՝ Тифлисъ. ред. Агбюръ кам' Тифлисъ, ред. „Таразъ“.
Tiflis, (Caucase) Rèdaction du journal AGBUR — *Խմբ. Հրատ. Տ. Նազարեան* — *կամ* Tiflis, Redaction TARAZ.

ПРОДОЛЖЕТСЯ ПОДПИСКА
На ежедневную литературно-политич. газету
„КАВКАЗЪ“.

Въ 1891 г. газета „Кавказъ“ б детъ выходить подъ прежнею редакціею и по прежней программѣ, ежедневно, не исключая и понедѣльниковъ.

ПОДПИСНАЯ ЦѢНА

Съ дост. въ Тифлисѣ.		По Имперіи.		СЪ ПЕРЕСЫЛКОЮ По почтовому союзу	
На годъ	11 р. 50 к.	На годъ	13 р. — к.	На годъ	18 р. 40 к.
„ ½ года	6 „ — „	„ ½ года	7 „ — „	„ ½ года	10 „ —
„ 3 мѣс.	3 „ 50 „	„ 3 мѣс.	4 „ — „	„ 3 мѣс.	6 „ —
„ 1 мѣс.	1 „ 50 „	„ 1 мѣс.	1 „ 75 „	„ 1 мѣс.	2 „ —

Подписка принимается исключительно въ конторѣ редакціи: Тифлисъ, до 1-го Декабря—уголъ Барятинской и Головинскаго, домъ Ротинова, а съ 1-го декабря—въ новомъ помѣщеніи, Пушкинская улица, домъ А. Бабанасова.

Для иногородныхъ адресовать: **Тифлисъ**, въ редакцію газеты „Кавказъ“.

—

III ՏԱՐԻ „ՄՈՒՐՃ“ III ՏԱՐԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ-ԱՄՍԱԳՐԻ

1891

ԹԻԱԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է

„ՄՈՒՐՃ“ ամսագիրը հրատարակւում է 1891 թուականին նոյն ծրագրով որով էս և նախկին տարիներում:

„ՄՈՒՐՃ“-ը հրատարակւում է ամեն ամիս 8—11 թերթ մեծութեամբ:
„ՄՈՒՐՃ“-ի բաժանորդագինն է տարեկան 10 րուբլի:

Թոյլ է տրւում վճարել մաս-մաս, ստորագրելիս առնւազն 5 րուբլի և առաջին կիսամեակում ամբողջը վճարելու պայմանով:

Ուսուցիչները և ուսանողները վճարում են տարեկան 8 րուբլի, ստորագրելիս առնւազն 3 րուբլի վճարելու պայմանով:

Խմբագրութեան դիմում են՝

Тифлисъ. Редакція Журнала „МУРЧЪ“ *և կամ*
Tiflis (Causace) Redatcion de la Revue „Murtsh“.

Խմբ. հրատ. Ահ. ԱՐԱՍԽԱՆՑԵԱՆ:

НОВОЕ ОБОЗРѢНІЕ
ВЪ 1891 ГОДУ
(ВОСЬМОЙ ГОДЪ ИЗДАНІЯ)
ВЫХОДИТЪ ВЪ Тифлисѣ, какъ и въ прошлые годы, ежедневно, по программѣ газѣты литературной, общественной и политической.

Условія подписки, съ пересылкою и доставкою: на годъ **10 р.**, на полгода—**6 р.**, на три мѣсяца—**3 р. 50 к.**, на одинъ мѣсяцъ—**1 р. 50 к.**, За границу: на годъ—**17 р.**, на полгода **9 р.**, на три мѣсяца—**5 р.**, (Подписка принимается не иначе какъ считая съ 1-го числа любого мѣсяца).

Для годовыхъ подписчиковъ, какъ городскихъ, такъ и иногородныхъ, обращающихся непосредственно въ контору редакціи, **ДОПУСКАЕТСЯ РЗСРОЧКА**, на слѣдующихъ условіяхъ: при подпискѣ вносится—3 р., къ 1-му марта—2 р., къ 1-му мая—3 р. и къ 1-му сентября—2 р.

Иногородные адресуютъ свои требованія: **Въ Тифлисъ, въ редакцію газеты „Новое Обозрѣніе.“**

продолжается подписка на **1891** годъ
на общественно-политическую и литературную газету
съ обширнымъ „ՀԵՖՏՅԱՆՅՄՐ ՐՏԴԲԼՈՄՐ“
„КАСПІЙ“
(ИЗДАНІЯ ГОДЪ ОДИННАДЦАТЫЙ)

Значительно увеличивая съ 1 января 1891 года форматъ газеты (до размѣровъ газеты „Кавказъ“), редакція нашла возможнымъ оставить прежнюю подписную цѣну, такъ что въ 1891 году газета „Каспій“ будетъ стоить:
Съ доставкой: въ годъ 7р. *Съ пересылкой:* въ годъ 8р. 50к.

Подписныя деньги адресуются: г. Баку, въ контору газеты „Каспій“, д. Красильникова. Въ Тифлисѣ подписка принимается при редакціи Газеты „Тифлисскій Листокъ“.

Редакторъ *Н. Сокольскій.*

Доз. цензурою, Тифлисъ 1891 г. 12-го января

Тип. „Аропъ“ Т. Я. Назарьянъ. Уг. Голов. пр. и Барят. ул.

ՏՊԱՐԱՆ «ԱՐՈՐ» Տ. ՆԱԶԱՐԵԱՆԻ